Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Llan
√2.137

17999

ԿԱՄՍՈՒՀԻՆ

ՈՒՐՍՈՒԼԱ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԷՊ.

ՄՈՍԿՈՒԱ,

1859.

ԿՈՄՏՍՈՒՀԻՆ ՈՒՐՄՈՒԼԱՆ

ԿՈՄՍՈՒՀԻՆ

ՈՒՐՍՈՒԼԱ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԷՊ
ՐԻԼԻ, ԳԵՐՄԱՆԱՑԻՈՅ.

Թարգմանեց

Դ. Տ.

1991

ՄՈՍԿՈՒԱ,
Ի տպարանի Վալբէնարայ Գօրնէէ.
1859.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ.

Санктпетербургъ. 18 Мая, 1859 года.

Ценсоръ. *В. Бекетовъ.*

Ի ՆՀԱՆ

Խորին յարգանաց և երախտագիտութեան

ՆՈՒՆԵԻ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆՑ

Խմբագրաբար

Նուիրուած

Թարգմանողը։

Գ-2137-60

ՀՊ 2142

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

Հադամարայի պալատումը նստած էր Կոմնուհին Ուրսուլա, կոմս Յովհան Լուդուիկ Նասսաու - Հադամարայի ամուսինը, և այնքան ջերմեռանդ կարուն մէր, որ նորա կամերֆրաուն (արքունական աղախինը), որ նորա մօտ նստած՝ նոյնպէս կարումէր, հազիւ կարողանում էր նորան հասնել։ Կոմնուհուն առաջի տեսնելից՝ կարելի էր նշմարել, որ մի գերբնական կին է։ Նա միջահասակ էր, կազմուածքամբ թոյլ և դեռ նորահաս (ջահել)։ Բայց նորա կերպարանքը այն-

քան աշնությունն և վեհափառությունն
էր ցոյց տալիս, որ նորա ընչին տեսուն
տալիս էր մի Աշմարիտ կայսերական
արժանավորությունն։ Նորա երեսը դեղ-
նագոյն էր, որով կարելի էր եզրափա-
կել, որ հիւանդությունը յաճախակի
տանջում նորա մատաղահաս մարմինը.
բայց նորա մեծ սև աչքերը փայլումէին
այն ուժեղ զօրությամբը, որ կարո-
ղանումէր այս հիւանդ մարմնի թուլու-
թեանը յաղթել։ Նորա լայն ճակատը
և փոքրիկ սուր քիթը ցոյց էին տալիս այս
կնոջ քաջ հոգին։ Նորա բերանի բա-
րակ, խոսուն գծերիցը կարելի էր իմա-
նալ, որ խոսելում մեծ շնորհք ունի և
այս շնորհքը նա գործ էր ածում ըստ
տեղի, կամ կանացի, ախորժ և խելք,
կամ արի և քաջ։ Այս ամէն աշնուու-

թեան և վեհափառութեան հետ, նորա
բերանը այն բարեկամությունն էր շն-
չում, որ քարշումէր ամէն մարդու սիրտ
իւր մօտ և դէպ'ի լիալի անկեղծությունն
էր առաջնորդում։ Կոմնուհին հագած
էր բրդեայ ճոթից սև շոր, որ թէպետև
նորան յարմար էր, բայց աւելի հասա-
րակ էր քան նորա հետևորդներու և
աղախիններու շորերը։ Սենեակումն էլ
տեսնումէր նոյն ժուժկալությունը և
չափաւորությունը։ Թէ երբեմն նորա
ամուսինը, որ սիրումէր իշխանական
պերճություն և պայծառություն, սե-
նեակներում հարուստ զարդարանք չը-
պահելու համար մեղադրումէր նորան,
նա սովորաբար պատասխանումէր, թէ՝
այսպիսի ճանճրալի ժամանակ, երբ քա-
դաքացիք տանջումեն սովից, առաջ

նոցա իշխանները և մեծաւորները պարտեն չափաւորվիլ և Ալֆոնս Արագոնոսից օրինակ վերառնել, որ հաքնումը և բնակումը, ինչպես մի հասարակ քաղաքաբնակիչ, ասելով՝ թե նա առաւել կըցանկանար զանազանվիլ իւր հպատակներից Ճշմարիտ իշխանական արժանաւորութեամբ, քան պսակի պայծառութեամբ և ծիրանեայի (արքունական շորի) փայլելով։

Այս Ճշմարիտ, որ այս մտամանելի ժամանակ էր։ Այս 1629 թուականին էր, երբ Ֆերդինանդ Գերմանացւոց կայսրը, տուաւ իւր ազգին վերստին նորոգելու յայտարարութիւն (Restitutionsedict)։ Այս այն զարհուրելի մայիս ամսուայ ընծան էր, որ այն ժամանակուայ տասն և մէկ տարուայ պատերազմը, դարձուց երեսուն տարուայ։

Ուրեմն կոմսուհու հագուստի և սենեակի չափաւորութիւնը ժամանակուայ հանգամանքներու հետ կատարելապես յարմար էին։ Այց սենեակը, թէ և զարդարած չէր, այնու ամենայնիւ մի իշխանական սենեակի տեսք ուներ։ Այնպես և կոմսուհին էր. առաջի տեսնելից՝ նորա վեհափառութիւնը մարդու ապշեցնումը, թէպետև, ինչպես ասացի, նա հագուած էր աւելի հասարակաբար, քան իւր արքունական կանայքը։ Սենեակի բարձր պատերը զարդարուած էին ամէն տեսակ զարդերից, որովհետև՝ կոմսուհին, որ ջերմեռանդ բեֆորմատ էր և, ինչպես Պուրիտանիստ, խիստ, ատումը ամենայն զգայական ձևակերպութիւններ։ Այց պայծառ գոթական դրուագաւ շինած և ծածկած պատշգամբը

(բալկոն), սենեակների նման անզարդ չէր, այլ, ինչպես հարկն է, զարդարած էր։ Որա նեղ պատերի վերայ գրած էին Աստուածաշնչից վերառած՝ վկայութիւններ, որոնք, ինչպես ինքնահաճոյ հիւսած թոկեր, կախ էին ընկած պատերու վերայով դեպ 'ի զանազան կողմը։ Այս վկայութիւնները, որոնք կամ սաստելով կամ քաջացնելով միան էին բերում կարդացողին իւր պարտաւորութիւնները, մնրդու ապշեցնումէին իւրեանց ազդու լինելովը և իսկոյն կարելի էր իմանալ, որ միայն կոմնուհու սուր միտքը կարող էր Աստուածաշնչից այսպիսի ընտիրները քաղել։ Ոսկեջրած արեգակը, լուսինը և աստեղները, պատշգամբի կապոյտ գմբեթի կողքին ժողոված, հանդարտ փայլումէին։ Գմբե-

թի ծայրին պայծառ երևումէին Աստուծու և Իսպեի միաւորած փայլուն կոմնական նշանները, (որովհետև կոմսուհին Ուրսուլա աղդով Իսպեի տոհմից էր)։ Ոցանից առաջնում պատկերացրած էր երկու ոտի վերայ կանգնած առիւծ, իսկ երկրորդում ծիծեռները, աստղերը և վարդերը։ Այս երկու նշաններն էլ շրջապատած էին կոմնուհու այս վկայութեամբը (*)։ «'ի հաւատի հաստատութիւն»։ Պատշգամբի պատուհաններից, որոնց տակին անցնումէր Լչլայ գետը, երևումէին Հադամնրայի տները։

Կոմնուհին իւր կարովը նստած էր մի փոքրիկ սիրուն սեղանի մօտ, որ մեծ հնարքով շինուած էր Սիդերլանդիայում և շատ յարմար էր ժամանակուայ և իւր տիրուհոյ բնութեան հետ։ Սա մէկ

(*) Դ. Խ. Գ։

կողմից մեկ հասարակ սեղան էր, որի վերայ կանայքը կարումեն, միւս կողմից դաշնամուր, որ պարունակումէր միայն քսան և չորս ձայն, այն ժամանակւայ չափաւոր պահանջողութեան հետ յարմար։ Նորա երեսի տախտակի վերայ, ուր մենք սովորել ենք շինողի անունը կարդալ, քանդուած էին յետագայ բառերս. «Ստուած յօրհնութիւն նոր օրհնեցից, տաճնաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացից քեզ։» (Սաղմ. Դաւ. ՃԽԳ. 9.)։ Այս այս վկայութեանը յարմար, բաց գրքակալի վերայ սաղմոսական և այլ հոգևոր երգերու նոտեր (երաժշտական խազեր) էին դրած։

Սորա ընդդէմ կողմից՝ այս սեղանը ցոյց էր տալիս արկղիկներու մի անչափ բազմութիւն և այլ ուրիշ հնարքներու

յօդուածներ, որոնց մեր պապերը այնքան հաւանումէին։ Մինչև անգամ մեծ հնարքով փիղի ոսկորից դրուագաւ շինած գաղը, որ սեղանի կողքին կախած էր, մի առանձին սիրունութիւն ունէր։ Նորա վերան զգաստութեան համար քանդուած էր Սիրաքայ մարգարէութիւնից վեր առած վկայութիւնը, որ ասումէ, թէ՝ ինչպէս բևեռը պատումը երկու քարի միջում՝ կենումէ, նոյնպէս և մեղքը գնողների և վաճառողների մէջ ներկայ է։

Այց այս արկղիկների միայն կէսն էր նշանակուած սեղ-թել պահելու համար. միւս կէսը պարունակումէր իւր մէջ մի փոքրիկ տան դեղանոց։ Այս նշանակութիւնը՝ կողքին գրած յետագայ առածս էր ցոյց տալիս. «Դարձրեալն

ստեղծ յերկրէ զբժշկականութիւնն։ այլ խորագէտ ոչ 'ի բաց խոտեսցէ զնոսա» (Գիրք Սիրաքայ Սարգ". էջ. 4.)։ Ամն ժամանակուայ լուսաւոր կանայքը դեռ չէին թողել բժշկականութեամբ պարապելը, որ նոցա մէջ ուանդութիւն էր դառել, իբրև դարերու ժառանգութիւն։ Ամէն առաւօտ, մօտ և հեռու տեղերի հիւանդները Հադամնրայ պալատի նախասենեակներն էին ժողովվում, որ կոմնուհին իւր օգնութեամբը և խորհուրդներովը օգնի նոցա։

Դրա, որ վերջի տարեքում՝ ամբոցը միայն հիւանդներով չէր լիքը, այլ ամենայն կերպ հարկաւորութիւն ունեցողները նոյնպէս ամբոխով այստեղ էին ժողովվում, յուսալով օգնութիւն և փրկութիւն գտնել այն մարդկանց մօտ,

որոնք նոցա համար անուանով և կարողութեամբ, բաց 'ի Ամստուծուց, ամէնից բարձր են։ Ամենաթշուառ օրերում՝ ամբոցը ամենևին շրջապատած էր լինում սոված ամբոխով, որ մարդու սիրտ պատառող ձայնով գոչումէին. «հաց, հաց». և երկար ժամանակ նոցա պատուհանների տակին խնդրումէին. «որ տեղ ոչ ոք չէ կարող օգնութիւն հասցնել, այնտեղ կոմսն է պարտ օգնել։» Ամ՝հա ինչ էր մոռածում ժողովուրդը, որ կուրութեամբ կարծումէր, թէ իւրեանց իշխանի կարողութիւնը և իմաստութիւնը անկործանելի է։ Կոմսը և կոմսուհին, իւրեանց կողմից, ինչքան կարողանումէին, աշխատումէին, որ ժողովուրդը չը տարակուսի այս կարծիքում։ Շատ անգամ ամբոցում մնացած՝ մինչև վերջի

/ 99 /

հացը շրջակայ տեղերու աղքատ մարդ-
կանց էին բաժանում։ Հշանակած օրե-
րում՝ քաղաքի աղքատներուն կերակուր
էին բաժանում։ Ամէն օր կոմնական սե-
ղանի մնացորդը շրջակայ գիւղերն էին
ուղարկում, հիւանդներու համար։

Կատարեալ քանդումն և պատերազմը
դեռ Հադամնրայի տերութեան չէին
դպչէլ, բայց կայսերական զօրքերու այս-
տեղով անդադար անցնելը, նորանց հա-
մար իջևանները, որ այս տասը տարում
պարտ էին անդադար պատրաստել, եր-
կիրը աւելի էին նեղում, քան թէ իսկ
պատերազմը։ Բաց 'ի սորա, անպտղա-
բերութիւնը և իւր սովորական ուղե-
կից տարափոխիկ հիւանդութիւնը, բաղ-
մապատկումէին նեղութիւնը։ Հաճարը
այնքան տակաւ էր, որ կարելի էր հաս-

կերի միջովը անցնել։ Ալուշ և կանեփը
այնքան կարճ էին բուսած, որ նոցա մնա-
րաթելերը, ինչպէս ծաղրաբար ասումեն
գիւղացիք, չէին բաւականանալ միայն
մի երեխայի շապկի համար։ Կուշտ անա-
սունը այնքան սակաւագիւտ դարձաւ,
որքան այժմ այստեղ (*) վայրենի կօշը,
և եթէ մէկ տեղ երևումէր եղ կամ
կով, զինուորները մեծ եռանդով որ-
սումէին նոցա։

Այսպէս դժուար հանգամանքներում,
կոմն Յովհան Լուդվիկը և իւր ամու-
սինը ցոյց էին տալիս մեծ գործունեու-
թիւն։ Կոմնը՝ ինչպէս խելօք իշխան,
կոմնուհին՝ ինչպէս խեղճերու և հի-
ւանդներու մայր։ Լսորիմնստ և հնարա-
գէտ կոմնը, որ շուտաժիր և պերճախօս

(*) Այսինքն Գերմանիայում։

եր, պերճութեամբ և հարստութեամբ կարողանումը դեպ 'ի իրան պատիւ ազ-դել։ Ուր հարկաւոր եր, նա անդադար աշխատումը և այսպէս կարողանումը ամէն իրան թշնամի թագաւորներու հետ հաշտ ապրել։ Այս այսպէս, թէպէտև միշտ չէ, բայց շատ անգամ կարողանու-մը փրկել իւր փոքրիկ թագաւորու-թիւնը զօրքերու իջևանները աւելի ծանր բեռէցը և զանազան հարկադրու-թիւններից։ Այթէ օրհնեալ Հադամա-բայ կոմսութեան դրութիւնը այսպէս անտանելի եր, ապա ինչպէս եր ուրիշ մծոիկ տերութիւններու դրութիւնը։ Յովհան-Լուդուիկը, իւր աշխատու-թիւններու և գործերու պատճառաւ, ամիսներով ձիայ թամքիցը վեր չեր գալիս։ Բայց ընդ նմին նա այս չարչա-

ռանաց համար՝ ամէն իւր հպատակներին սիրելի եր։ Ա՛հա, ինչ պատճառաւ էին ասում այն ժամանակ, թէ՝ Հադամա-բայի կոմսը, մաղերով իւր կոմսութիւ-նը աւելի առաջ կըտանի, քան ուրիշ թագաւորներ իւրեանց տերութիւնը երկաթեայ շղթաներով։ Այս ահա, նորան շուտով ներկայացաւ այն հանգամանքը, որով նա փորձեց, թէ՝ արդեօք ինչքան հեռաւորութեամբ կարող է առաջ տա-նել իւր թագաւորութիւնը։

Բայց յետ դառնանք կոմսուհի Ուր-սուլայի սենեակի վերայ խօսելու։ Նա մէկ քանի ժամանակ թողեց իւր ձեռա-գործը, սեղանի խուփը ծածկեց և ան-հանգիստ տարակուսութեան մէջ ըն-կաւ, և այսօր առաջի անգամը չեր, որ նա այս դրութեան մէջ եր գտնուում։

վերջի օրերում նորան հետ այս բաւա-
կան յաձախակի էր պատահում։ Նորա
ամուսինը գնացել էր Ենա քաղաքը,
որ իւր վերայ, Նասսաու-Ոլիցի և Նաս-
սաու-Ոիլլեմբուրգի կոմսերի վերայ,
կայսերի բարկութիւնը հեռացնի։ Որով-
հետև Կայսերական դրան դատաստանը
նոցա վերայ մեծ մեղադրանք էր մտել,
իբր թէ նոքա տասը լենի ձիաւորներով
օգնել են Պֆալցի Կուրֆիրստին։
Բաց 'ի այս, Յովհան-Ֆուդուիկը կա-
մենումէր, առանց միջնորդի, կայսերից
խնդրել իւր կոմսութեան համար փոքր
ինչ թեթևութիւն, որովհետև վերջի
ժամանակներում կայսերի զօրքերը նո-
րան մեծ վնասներ պատճառեցին։

Բայց ահա, արդէն մի քանի շաբաթ
անցել է և կոմսից ոչ նամակ կայ և ոչ

համբաւ, այլ կայսերական պաշտօնատար-
ները ընդհակառակը երկու շաբաթ ա-
ռաջ շատ խիստ հրաման էին ստացել։—
անմիջապէս զօրքերը Հադամարայ կոմ-
սութիւնից դուրս հանել, վերջ առած
հարկը յետ տալ, և այս տերութիւնը,
ինչպէս մի դաշնաւոր տերութիւն, խնա-
յել։ Ուրեմն կոմսի գործը լիալի յա-
ջողութիւն ունէր և նորա Ենա գնալը
'ի զուր անց չէկաւ, բայց այնու ամե-
նայնիւ զարմանալի էր, որ նորանից ոչ
մի համբաւ չը կար։ Այս բանը, 'ի հարկ
է, շատ հեշտ կարող էր կոմսուհուն տա-
բակուսանաց մէջ ձգել։ Նա դրեթէ
սարսափումէր, որ իսկ այժմ փոքրիկ սե-
զանի խուփիցը իւր հայեցուածը չէր
կարողանում հեռացնել, որի վերայ
գրուած էր այս դիւիզը· «'ի հաւատի

հաստատութիւն»։ Ա՛յսօր կարծես՝ ակամայ պէտք էր, որ նա կարդայ այս բառերս և մոռանէ նոցա նշանակութեան վերայ, ինքը չիմանալով թէ ինչ է պատճառը։

Բայց յանկարծ նա այս մոռացմունքից դուրս եկաւ, որովհետև այս ժամանակ ծանուցին նորան, որ Մինեբոդի պաստօր (քահանայ), Ելիզնեերը խնդրում է հրամայեցնել Նորա Գերութեանը և յայտնել իւրեան մի շատ հարկաւոր բան։

Կոմնուհին լաւ ճանաչում էր այս պաստօրին, որովհետև այն ժամանակուայ պրոտեստանտներու Դրանց հասարակութիւններում, հոգևոր անձինքը մեծ նշանակութիւն ունէին։ Սոքա, ընդհանուր խօսակցութեան ժամանակ, սովոր էին ուրիշների մօտ անուղղակի յայտնել

իւրեանց ազատ և հանրածանոթ մտքերը և համոզմունքները։

Պաստօրը քաղաքավարութեամբ մտաւ սենեակը։ Նորա վարվողութիւնում և շարժմունքներում, բաց 'ի քաղաքավարութիւնը, տեսնւում էր հաստատութիւն և յանձնապաստութիւն, ինչպէս այս աշխարհքից բարձրաստիճան մարդկանց հասարակութիւնում մեծացած մարդ։

Կոմնուհին ընդունեց նորան պատուով և հրաւիրեց նստել։

— Դուք կամենում էք յայտնել ինձ մի շատ հարկաւոր բան, ասաց նա. — այս բառերով՝ դուք ինձ շատ վախեցրիք։

— Այնպէս հարկաւոր բան, կոմնուհի, որպիսին ինչքան կարող եմ միտս բերել, վաղուց չէ պատահել։

— Երևի, կոմսից մի տհաճելի լուր

էք ստացել։ Ասէք խնդրեմ ուղիղ, առանց բացատրութեան և յառաջաբանութեան։ Աստուած ինձ զօրութիւն կ'ուղարկէ ձեզ լսելու։

— Կոմսից ես լուր եմ ստացել. նա Վենայումն է և, փառք Աստուծոյ, առողջ է։ Բայց այս կերպով ես չեմ կարող սկսել իմ պատմութիւնս։ Հրամմն տուէք, կոմսուհի, որ ես սկսեմ իմ պատմութիւնս շատախօս պառաւ կնոջ նման, երևոյթով հեռի և ինչին հանգամանքներից։ Այս այլ կերպով չեմ կարող պատմել, կը շփոթուիմ և ամենայն բանը կը խառնեմ։

Կոմսուհու երեսին մի տխուր, բայց բարի ժպիտ երևեց։ Նա գլխով համաձայնութեան նշան տուաւ պաստօրին և ասաց.

— Պատմեցէք այնպէս, ինչպէս մտածելէք, ինչպէս ձեր կամքն է. ես ձեր ետևիցը կը գամ, ինչպէս գառը։

Կոմսուհին այս խօսքերս ասաց դողալով և արտաքին հանգստութիւնը դժուարութեամբ պահելով։ Նա կրկին նայեց իւր առաջև դրած փոքրիկ սեղանի խուփին և կարդաց նորա վերայ «Ի հաւատի հաստատութիւն»։ Բայց այս անգամ այս խօսքերը մի և նոյն ազդեցութիւնը չունեցան նորա վերայ, ինչպէս մի ժամ սորանից առաջ, ընդհակառակը, նա մի ոյժ ստացաւ պաստօրին հանգիստ լսելու։

Պաստօրը սկսեց այսպէս.

— Ձեր Արեծութեան յայտնի է, որ Արենդերսկիերխենի պաստօր, Տեկատորի եղբօր որդին՝ ատենադպրի պարտաւո-

րութեամբ գնացել է ձեր ամուսնոյ հետ Վենետիկ։ Այս խելք և Ճշմարտասեր մարդ է։ Բաց՝ի դորա, պատուական օրենսգէտ է, որին կարելի է ամենայն բանում, առանց երկմտութեան, հաւատալ։ Օրերում Արենգերսկիերխեն նա Վենետիկից մի երկար նամակ ուղարկեց, որ լիքն է անասելի, բայց ամենն ինչ Ճշմարիտ համբաւներով այն մասին՝ թէ ինչ է պատահել Վենետիկում այս վերջի ամիսներում։ Այս նամակը այնքան վախեցրուց Տեկստորին, որ նա երկիւղ կրեց նորա պարունակութիւնը թագցնել և այս մասին նա որոշեց, որ շրջակայ տեղերու պաստօրները ժողովի, նամակը կարդայ նոցա առաջև և նոցանից խորհուրդ հարցնի, թէ՝ ինչպէս նամակի պարունակութիւնը Ձեր Արծութեանը յայ-

անի։ Բայց պէտք է, որ ես փոքր ինչ էլ յետ դառնամ։

— Ձեր հաստատութիւնը հանուամ մինչև անողորմութիւն, Տիզիներ։ Բայց ներեցէք, ես ձեզ խոստացայ համբերել, ասաց կոմուհին, հազիւ ինքը եւրան պահելով։

— Այո՛, զօրացեցէք համբերութեամբ, որ, ինչպէս ձեզ, նոյնպէս և մեզ ամենեցունցս, շատ հարկաւոր կըլինի, ասաց պաստօրը վսեմաբար և տեղիցը վերկենալով նոյն վսեմութեամբը շարունակեց։—Երանի՛ նորան, որ մինչև վերջը կը համբերի։ Բայց ես հանգստութեամբ կը պատմեմ ձեզ Վենետիկում պատահեալ անցքը և դուք նոյնպէս հանգստութեամբ լսեցէք ինձ։

«Կոմսը դեռ Կոբլենց քաղաքումը ու-

բախութեամբ սկսել էր իեզուիտներու հետ կրօնի վերայ վիճաբանել։ Այս Ճարտար խօսող է, այսպէս վիճաբանութիւններ շատ սիրումէ. պատահած ժամանակ՝ նա մեծ համարձակութեամբ վիճաբանումէ և անմիջապէս հակառակողին յաղթումէ։ Այնտեղ նա շատ հիացաւ իեզուիտներու նենգաւոր տրամաբանութեան վերայ, նոցա խորամանկ խելքի և Ճարտարութեան վերայ և այլն։ Այս վիճաբանումէր նոցա հետ, բայց զարմանում և նախանձվումէր նոցա վերայ, ինչպէս մի քաջ գօտեմարտ զարմանումէ և նախանձումէ իւր հակառակողի առաւել մեծ հնարագիտութեան վերայ։ Վենսա գնալիս՝ կոմսը Պ՝այնց քաղաքումը բարեկամացաւ իեզուիտ Ցիգլերի հետ, որ, ինչպէս Զերպ՝եծութեանը յայտնի

է, կուրֆիւրստի խոստովանահայրն է։ Այստեղ նոյնպէս նոցա մէջ Աստուածաբանական վիճաբանութիւն ընկաւ։ Ինչպէս երևումէ, այս իեզուիտը, տեսնելով, որ իւր տաք հակառակողը Յվինգլի ուսման մէջ շատ էլ բանիմաց չէ, իսկոյն Վենսա երևելի հոգևորական պատերազմիներին, որ կայսերի խոստովանահայրն է, նամակ է գրում։ Ցիգլերը այս նամակի մէջ եռանդով յանձնումէ կոմսը Պ՝իմերմանի տրամաբանութեան որոգայթին։ Այսպէս մէկ իեզուիտ ձեր ամուսինը միւսին յանձնեց, ձեռից ձեռ և նա միայն վիճաբանութիւնը սիրելով՝ մի քանի կաթոլիկական հաւատի վարդապետութիւններ աննկատելի կերպիւ իւր հաւատինը շինեց, թէ և ինքը երան մի ջերմեռանդ ռեֆորմատ էր համարում։

Արդեն վաղուց յետոյ այս բանիս վերայ զանազան կարծիքներ են մեզ դալիս։ Ձեր տեղը, կոմս Որբեցը, մէկ անգամ ասաց. «զարմանալի լուրերն են մեզ դալիս եղբօրս վերայ, Աստուած անիծի այս չարսկամներուն։» Թէպէտ այս խօսքերը մեծ կոպտութեամբ է ասած, այնու ամենայնիւ տեղն է։ Ներեցէք ինձ, կոմսուհի, որ ես մի քանի անպատշաճ խօսքեր եմ խաւնում։ Այս խօսումեմ բացարձակ, ոչքից չը վախենալով, և ես պատասխանատու եմ իմ խօսքերուս համար միայն Աստուծոյ առաջին, ինչպէս նորա Աւետարանը քարոզիչ։

— Այս արդեն ձեզ ասացի, որ ինչպէս մի դաւը՝ համբերող կը լինեմ, պատասխանեց կոմսուհին շնչապատառ ձայնով։ — Այս արդեն գիտեմ դրեթէ

քանը ինչ է։ Աստուած կը վարձատրի ձեզ, եթէ փոքր ինչ կարձացնէք այս տանջանքը։

Պաստորը շարունակեց.

— Ուրաջ կոմսը ոչ համոզելով և ոչ խնդրելով կայսերից ոչինչ չըկարողացաւ ստանալ։ Այս արդեն կամենումը յետ դառնալ տուն, ինչպէս յանկարծ բանը փոխվեցաւ. կայսերի անգթութիւնը՝ ամենաքնքուշ բարեկամութիւն դարձաւ և այս բանը այնպէս յանկարծակի պատահեց, որ ամենքս համար մնաց անհասկանալի, ինչպէս մի դժուար հանելուկ։ Այդ պատճառը երևանեցաւ, որ այս միջոցումն պատերազմը Լեհերմանը պատեր Յեկելերի նամակը ստացել էր և կայսերին յայտնել էր, որ այս շատ յարմար դիպուած է, որով շատ հեշտ կա-

րելի է մէկ հոգի պապի որոգայթը ձգել, որ մեծ պարծանք կը լինի նոցա համար, մանաւանդ այսպիսի երևելի իշխանի հոգին։ Ֆերդինանդն էլ, ուր որ մի այսպիսի բան տեսնէ, այնտեղ անդադար աշխատող է։ Ա՛յս մի ջերմեռանդ հոգի որսող է, մանաւանդ այնպիսիներու հոգին, որոնք հարուստ և զօրաւոր մարդիք են։ Կոմսին հրաւիրեցին Կալենբերգի վանքի հանդիսաւոր հիմնարկութիւնը, որ կայսրը ինքն էր կատարում։ Հանդիսից յետ՝ կոմսը ճաշը կերաւ Ա՛նորա Մեծութեան և պատերազմներ մանի հետ միասին։ Երևի, այս երկու պատուելի անձինքը իսկ և այստեղ են նկարագրել կոմսի երևակայութեանը թագաւորութեան օգտի փայլիւն կերպը, որ նորա փառասիրութիւնը գրգռել է։

Եւ Ճշմարիտ որ այժմ առհասարակ ամենայն փառքը կայսերի բարեհաճութիւնից է կախեալ։ Ո՛նորա մօտ փառք էլ է կարելի գտնել, հարստութիւն էլ, կայք էլ, պատակներ էլ և այլն։ Մենք, պրոտեստանտներս, ընդհակառակը, խեղճ և անարգեալ ժողովուրդ ենք։

«Ա՛յս ճաշից յետ՝ կոմսի և Ֆերմանի մէջ մի տաք Ա՛ստուածաբանական վիճաբանութիւն բացուեց։ Պատերը, որ այսպիսի դիպուածներուն շատ անգամ պատահած և փորձած մարդ է, խորամանկ աղուէսի նման, կոմսի ճանապարհը կտրեց և հարկադրեց նորան յաղթուել։ Ա՛յս վէճը տևեց մինչև եօթը ժամ։ Որանից յետ կոմսը էլ քաղաք չ՚եկաւ, այլ իեզուիտներու մօտ մնաց

վանքումը։ Այնտեղ նոցա մեջ, ինչպես սատանաներու պալատում, բարձր աստիճանի մարդկանց ընդունելու համար, ամենայն բանը պատրաստ կայ։ Այնտեղ նախաստիճան իշխանաց համար առանձին սենեակ կայ պատրաստած։ Կոմը այս սենեակի մէջ փակուեց և բոլոր շաբաթը մնաց նորա մէջ։ Այս միջոցում նա, մինչև շունչ ու զօրութիւն էր մնում, անդադար իեզուիտներու հետ վիճումը։

Շատ կարելի է, որ նա ճաշ էլ չ'ուտեր այս բոլոր շաբաթը, որովհետև նա պատրաստ էր հաց ուտելու ժամանակ՝ սեղանի վերայ նորան ծառայող վարդապետի հետ ևս վիճել, բայց իեզուիտները նորանից հեռացնումէին ծառաներուն և կերակուրը նորա առաջին

դնելով, թողնումէին նորան մենակ, որ նա կարողանայ հանգստանալ գոնեայ մի քանի րոպէ։ Թէև իեզուիտները գրեթէ արդէն կոմին պապադաւան դարձրին, կամ թէ, աւելի լաւ է ասել, ճանապարհից դուրս բերան, այնու ամենայնիւ նա չէր կարողանում յաղթել իւր մէջ այն խորին ամօթանքը, մտածելով թէ՝ ինչպես նա կ'երևի իւր եղբարց և ընտանեաց աչքի առջևը, եթէ նա նորանց այնքան ատելի կրօնին դաւանողը դառնայ։ Այս իսկ այս էր պատճառը որ նա չէ համարձակվում այսքան ժամանակ ձեզի նամակ գրել։ Այս մտածողութիւններից տանջվելով, նա եկի մի երկու օր իշխանական սենեակի մէջ փակվեցաւ։ Իեզուիտները բոլոր իւրեանց ջանքը գործ ածեցին, որ, ինչքան կարելի

է, աւելի պայծառ նկարագրեն նորան այն ամէն փառք և պատիւը, որ նա կայսերից կը ստանայ, եթէ կաթոլիկ դառնայ։

«Թռչնորսը իւր քաղցր ձայնովը հնչումէր,
"Երբ թռչունը կանչել իւր մօտ կամենումէր։

«Այ ահա մէկ անգամ մի հրաշք պատահեց։ Յոմնը Եկեղեցում՝ պատարագի ժամանակ, որ նորա համար էին մատուցանում, յանկարծակի զարհուրած՝ սկսեց շարժվիլ և դողալ։ Նորա հոգին լուսով լիացաւ։ ամէն տարակուսանքը ցրուեցան և նա կարծումէր թէ տեսնում Աստուծոյ, Որ ներկայ է միայն կաթոլիկացուց տաճարում։ Այս վեր թռաւ, վազեց պատարագ մատուցանող քահանայի մօտ և գոչեց։ «Հայր իմ, ես կաթոլիկ եմ, ես ցանկանումեմ կենալ և մեռ-

նել այս հաւատումն։» Ռեղուիտները իսկոյն այս բոպէական մոլորութիւնից օգուտ քաղեցին։ պատեր Լիմերմանը նորա խոստովանքը լսեց, և Աստուած ծածնայ ծննդեան օրը։։։։

— Ոտադարեցէք, օգնեցէք կոմնուհուն։ Այցեցէք, նա նստել է, ինչպէս մեռած, գոչեց կամերֆրաուն և վազեց դէպ 'ի փոքրիկ սեղանի դեղանոցը։

Պաստօրը կոմնուհու ձեռքը վեր առաւ, նորան շարժեց, կանչեց։ բայց կոմնուհին մնումէր դեղնած, անշարժ և թմրած։

Վերջապէս թունդ ցքուոյքները նորա կեանքը յետ դարձրին։ Միայն մի քանի բոպէ կոմնուհին անհանգստութեամբ իւր չորս կողմը նայեց, կարծես թէ՝ կամենումէր միտը բերել ամէն

պատահածները։ Բայց յետոյ վեհմու-
թեամբ, հանգստութեամբ և մեծու-
թեամբ լիքը վերկացաւ և իւր մեծ սուր
աչքերը դարձուցանելով պաստօրի վե-
րայ, հաստատուն ձայնով ասաց։

— Պարդոյ հոգին և հոգևոր լսե-
լիքը կարողին դեռ գործել, երբ ես
նա թմրութեան մէջ լինի։ Մենայն
բանը լաւ մտիս է։ Շարունակեցէք
առանց վախի, առանց ինձ ողորմելու։
Օրեմն, Աստուածածնայ ծննդեան օրը··

— Աստուածածնայ ծննդեան օրը, —
շարունակեց պաստօրը, կամաց—կամաց,
կըշռելով իւր խօսքերը և ձայնը բարձ-
րացնելով, կարծես թէ այն պատճա-
ռաւ, որ բաժակումը մնացած՝ վերջի
ամենադառն կաթիլները կոմուհին աւե-
լի համարաբար խմի։ — Կոմս, Յովհան-

Լուդուիկ Նատասու-Հաղամարը իւր
պապերի հաւատից հրաժարվեցաւ և
դարձաւ պապաղաւանեկեղեցոյ անդամ։
Այս աւարտեցի։ Այս ամենը պարու-
նակուումէին նամակի մէջ։

Կոմնուհին դահոյքի վերայ լուռ նս-
տած էր։

— Այս կենեմ, ասաց նա վերջապէս,
բայց արտասուք չ'ունեմ։ Այս անբաղ-
տութիւնը, որ Տէրը իմ տունս և հոգս
ուղարկեց, այնքան մեծ է, որ նորա
վերայ լաւ չէ կարելի։

Պաստօրը, երբ այս խօսքերը լսեց,
ժողովեց իւր զօրութիւնը և ասաց·

— Այդ ես ևս գիտեմ, որ դու ուղ-
ղափառ ուսմանն հաւատարիմ կը մնաս, որ
դու չես համբերել, որ քո և քո Տէրոջ
մէջ, կանգնի մարդ, թէ ևս նա քո

ամուսինը լինի։ Մեր յոյսը քեզ վերայ է, այս օրից սկսած՝ բոլոր Հաղամանրայի բաղդը և թշուառութիւնը քեզանից է կախեալ. երևի այդ է մեր Տիրոջ կամքը։ Ուրեմն մտիդ բեր նորա խօսքերը. «Կացէք յիս և ես 'ի ձեզ» (*)։

Կոմնուհին մնտով ցոյց տուեց իւր վկայութիւնը և հաստատութեամբ ասաց.

— Ահա իմ դաւանութիւնս։ Բայց ինչ որ լինի, ես աւելի պատրաստ եմ թողնել իմ ամուսինս, զրկվել իմ հողից և աղքատի շորերով իմ հօր տունը դառնալ, քան թէ իմ պապերու հաւատից հրաժարուել։

Ահա ժամանակը Սիզիները ասաց.

— Այժմ ես դեռ մէկ խնդիրք-էլ ունեմ, որ վերաբերում է ինձ։ Ահա,

(*) Աւետ. Յովհ. ԺԵ, 4.

տեսնում էք, կոմնուհի, երբ մենք, պաստորներս, ժողովեցանք այս բանիս վերայ մտածելու, և ամենեքեանքը միաբերան ասացին, թէ պէտք է այս նամակի տխրալի պարունակութիւնը ամենից առաջ՝ յայտնել ձեզ, ամենաճարտար մարդերից մէկը չըգտնվեց, որ այս պարտաւորութիւնը վեր առնէր իւր վերայ։ Ամէն մէկը նոցանից սարսափում էր, որ յայտնելով ձեզ այսպիսի մի տխրալի համբաւ, չըբերէ իւր վերայ ձեր անողորմութիւնը. ամէն մէկը հրաժարուում էր այս պարտաւորութիւնը առնել իւր վերայ, ասելով, թէ ոչ մի անգամ մնամակից չէ եղած կոմնական պալատի հանգամանքներում և անփորձ է։ Վերջապէս այս ամէնը, ինչպէս այսպիսի տհաճելի հանգամանքներում գրեթէ միշտ պատահում է, ինձ վերայ թափ-

վեցաւ։ Իսկ ես այս պատճառաւ կամեցայ մի խնդրել Ձեր Արեծութեանը չբաբակնալ ինձ վերայ և չզրկել ձեր ողորմութիւնից այսպիսի չար և սաստիկ համբաւ բերելու համար։ Այս ամենը ես միայն ձեզ սիրելից, կամուհի, և ձեր հաւատի և հայրենեաց օգնութեան համար արեցի։ Այլ սոցանից ինձ մնաց միայն սրտի թփթփալը և անքուն գիշերները։

Կամուհին ժպտելով նորա ձեռքերը վերառաւ և ասաց.

— Հաւատացէք, որ, մինչև ես կենդանի եմ, իմ առանձին բարեկամութիւնս ձեզ երբեք չի թողնիլ։ Դուք խիստ, բայց ընդ նմին ուղիղ և ճշմարիտ համբաւ բերիք։ Դուք մի քանի խօսքերով այնքան ինձ մխիթարեցիք և քաջացրիք,

ինչքան հաղիւ թե ուրիշ, որ և իցէ, խոստովանահայր, կարողանար երկար քարոզով։

«Այս ես ոչ մի ժամանակ չեմ մոռանալ։ Այլ եթե, իմ կարծեացս հակառակ, կ'արգելէն, որ բեֆորմական քահանաները Աստուծոյ ծառայութիւն մատուցանեն, և եթե նոցա կըհալածեն, այն ժամանակը ես, այս ժամի յիշատակի պատճառաւ, կ'աշխատեմ ձեր քաշած վնասները վարձատրել և Լիպպէի Կամութիւնում ձեզ համար նոր ժողովուրդ գտնել։

Այսպիսի խօսքերով՝ նա պատօրը ճանապարհ արեց։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ։

Կոմն Յովհան-Լուդվիկը պապա-դաւան դառնալով՝ ամենայն բանը, ինչ կամենումէր, դտաւ և բաց 'ի դորա, աւելի, քան սպասումէր։

Կոմնը ներգործութեամբ զօրացաւ, կայսերին բարեկամ դառաւ, այնպէս որ ամենայն բան, ինչ խնդրումէր, անմիջապէս կատարումէր։ Ամենեքեանքը սկսեցին նորան օրհնել. բարձրաստիչան անձինքը պատուումէին նորան և սիրում։ Եպիսկոպոսական հոգևորականները փառաւորումէին նորան, պապի

հրեշտակները, սուրբի պէս, նորան պաշտումէին։ Այսպէս յանկարծակի Հնամարտվեցան նորա շքեղութեան, փառքի և կարողութեան վերայ արած երևակայութիւնները։

Մեծ մարդկանց հասարակութեան մէջ՝ նա այժմ այն դրութիւնումն էր, որում այսքան ժամանակ ցանկանումէր գտնուիլ, և այս շքեղութեան մէջ նա ամենևին մոռացաւ խաղաղ Հադամնրայ ամրոցը և իւր դեղնած, աստուածապաշտ և տխուր ամուսինն—Եվ նորա հետ միասին։ Այս եթէ միտն էր ընկնում երբեմն հայրենիքը, ինչպէս նոր գերեզմանից մի նախատելի տեսիլ, այնու ամենայնիւ այս մայրաքաղաքական ուրախ կենաց զմայլմանն մէջ նոյնպէս և շուտով մոռացուումէր։ Այսպէս անցկացաւ գրեթէ

չորս ամսից աւելի, մինչև դեկտեմբերի վերջը։ Կոմսը, որ միշտ նաղելի ամուսին էր, այս միջոցումն՝ իւր կնոջ վերայ, ոչ մի տող չըգրեց։ Սորա պատճառը կամ ամօթխնը, կամ տհաճելի պատասխան ստանալու վախը։ Միայն Հինգեան օրերի մօտ, կամենալով վերջապէս տուն դառնալ, համառօտաբար յայտնեց կոմսուհուն իւր պապադաւան դառնալը, ասելով թէ՝ միտք չունի նորան հարկադնել իւրպէս վարվել, թէ դրան քահանան, պալատի փոքրիկ եկեղեցումը, կը կատարի բեֆորմնական պաշտօնները։ Նա կոմսուհուն իրաւունք էր տալիս կրթել իւր աղջկերանց բեֆորմացուց դաւանութեան մէջ, բայց տղերքը պարտ էին, ինչպէս նոցա հայրը և բոլոր թագաւորութիւնը, պապադաւան լինել։

Այս նամակի հետ միասին Հադամարայ պալատը՝ կոմսի ամէն ծառայողների վերայ եկաւ շրջաբերական յայտարարութիւն, որ հրամայումէր պատրաստ լինել իւրեանց թագաւորի դաւանութիւնը ընդունելու, ասելով թէ՝ չըկամեցողները խոնարհվիլ այս հրամանիս կը զրկուին իւրեանց տեղերից և գաւառիցը դուրս կը քշուին։ Կոմսի այս սաստիկ, սառ և համառօտ նամակը աւելի վիրաւորեց Կոմսուհուն, քան թէ նորա հինգ ամսուայ լռութիւնը։ Երկար ժամանակ այս հաստատ կինը մտածումէր թէ՝ արդեօք ժամանակը չի՞ եկել, երբ պէտք է քանդել այս ամուսնական կապը, որ մինչև այժմ այքան բաղդաւոր էր, և այժմ այսքան ծանր էր նորա համար։ Բայց, միտը բերելով իւր տերու-

թիւնը, որի համար այս վերջի ծանր ամիսներում՝ նա իսկապէս կատաղարիչ էր դառել, մի ոյժ ստացաւ աւելի համբերել։ Այնայն այժմ նա զգաց, թէ՝ Լիպպէի կոմսութիւնը, իւր իսկական հայրենիքը, մինչև որքան իւր համար օտարացած է և ինչպէս, ընդհակառակը, այն երկիրը, որին զոհ էր բերել իւր գործունէութեան, հոգացողութեանց և տանջանաց տարիները, երան սիրելի էր դարձել։ Այս ունէր մի յիշատակարան որի մէջ նա ամենայն երեկոյ գրում էր իւր օրական գլխաւոր պարապմունքների վերայ, աւելցնելով մի ոտանաւոր, կամ մի առած, ըստ մեծի մասին Աստուածաշնչից, կամ հոգևոր երգերից վերառած։ Այս առածները վերնագրի տեղ էին, որոնք արտայայտում էին օրուայ որ-

պիսութիւնը։ Այսօր կոմսուհին անհանգստութեան պատճառաւ, ոչինչով չէր պարապեց, և այս մասին ոչինչ չէր գրեց դիքումը, բաց 'ի երկու ոտանաւոր։ Այս ոտանաւորները Օվիդիայի ոտանաւորներից էին, որ գրեց իւր աքսորութեան ժամանակ.

"Nescio qua natale solum dulcedine cunctos,
"Ducit et immemores non sinit esse sui. „ (*)

Այս ոտանաւորների տակին նա գրեց նորա թարգմանութիւնը։

Կոմսը չէր շտապում տուն հասնել։ Այն մարդու համար, որ յետ է դառնում անմնաքուր խղճմտանքով, ծուռ-

(*) Զգիտեմ ինչ զօրութիւն է, որ ինձ քաշում է դէպ 'ի իմ սիրելի հայրենիքս, ինչքա՞ն նորա քաղցր յիշատակը միշտ բնակւում է իմ հոգուս մէջ։

ու-մուռ Ճանապարհները ամէն բանից հաՃելի են և սայլավարը քանի ծանրաշարժ է, այնքան լաւ է։ Կոմը Մինխենում մի քանի օր մնաց և ընդունուածը, ինչպէս մի անգին հիւր։ Հիւրընկալումը նոյնն էր։ Բայց քանի կամացել չ'եկաւ, այնու ամենայնիւ վերջապէս Հադամարայ հասաւ։

Երկու կողակիցներու իրար հանդիպելը այնքան էլ ծանր չէր, ինչքան կարծում էին։ Կոմնուհին չըկարողացաւ արտասուքը պահել, բայց ոչինչ չ'ասաց։ Կոմը նոյնպէս նաղելի էր, ինչպէս առաջուայ բաղդաւոր օրերը։ Նա Ճարտար լեզուով ձևացրեց իւր վարվողութիւնը իբրև ստիպողաբար, ինչպէս մի կարևորութիւն իւր կառաւարութեան ինքնակալութիւնը պահելու համար,

Հասսաու — Օտտոնական աղգի ուրիշ կոմները և իւր ժողովուրդը ամէն հալածանքներից փրկելու համար։ Որա ասելովը, բոլոր Հասսաու տերութիւնները հրու համար զոհական դառն էր դարձել և նորա պապաղաւան դառնալը մեծ զոհաբերութիւն էր հայրենական օգտի համար։ Այս մտածմունքները, կոմի զօրեղ աղդեցութեան օգնականութեամբ, նորա բոլոր հպատակների մէջ տարածեցին։ Կոմի առաջուայ աղգայնութիւնը կրկին կենդանացրին, և սորանից առաջ այնքան շփոթուած կոմնութիւնը փոքր միջոցում հանգստացաւ և սկսեց ծաղկել։ Այժմ Ճշմարտացան այն խօսքերը որ ասումն · այնտեղ ուր ուրիշ կառաւարիչ պէտք է շղթաներ գործածի, որ իւր տերութիւնը կործանումից

պահպանե, կոմն Յովհան — Լուդվիկին մի մեղ բաւական է։

Կոմնութեան դարձնելը շատ խեղճացի և մեծ զգուշութեամբ սկսեցին։ Կոմնի հետ եկան միայն երկու իեղուիա, պատեր Պրակը և պատեր Ինդելը։ Սկզբումը սոքա էլ շատ բաւական էին։ Նոքա բանը փոքր առ փոքր ձեռնարկեցին։ Նոքա կարողացան իւրեանց համար յարմար և ազդեցութեամբ զօրեղ մարդիք գտնել, յետոյ սկսեցին քարոզել ժողովրդի հասկացողութեան հետ յարմար, և ճառերի մէջ ժամանակ-ժամանակ դցումէին իւրեանց յուշարար խօսքերու աղը։ Նոցա ճառերը կամ տխուր էին լինում և մեծահանդէս, կամ մեղմ կոմիկեան (ծաղրաշարժ), կամ իւր գեղեցիկ զուարճախօսութեամբը և երգիծաբանութեամբը ազդու։ Ժողովուրդը այս քարոզներին հաւանումը առաւել, քան ռեֆորմացոց պասաորներու, որոնք ըստ մեծի մասին միակերպ ծանրեին լինում, մեծահանդէս կամ անպատճառ Աստուածաշնչական վկայութիւններով լիքը։ Իեղուիա քարոզիչը միշտ չորս կողմով պատած էր բազմութիւն ամբոխով։ Այց լսողները, որոնք ըստ մեծի մասին միայն հետաքրքրութեան պատճառաւ էին գալիս, քարոզը աւարտելուց յետ, խնդումէին խոստովարանի մօտ, այնպէս, որ մի քանի ամսում, այս երկու իեղուիաները դրեթէ կոմնութեան կէսը պապաւան դարձրին։ Այց երբ Հաղամնարայի և Նյլցի մէջ, որպէս թէ իեղուիտների աղօթքով, յանկարծ հանքային աղբիւր դուրս եկաւ և հարիւ-

բաւոր հիւանդներ աղօթքով նորա ջրի մէջ լողանալուց և նորա առողջարար ջուրը խմելուց, առողջութիւն էին ստանում. այն ժամանակ ժողովուրդը մեծ բազմութեամբ, դեռ իեզուիտների քարոզը չը լսած ևս, պապադաւան էր դառնում։

Կոմսը ինքը Հադամարայ քաղաքաբնակիչների հրապարակական ժողովում՝ յայտնեց նոցա, որ բոլոր կոմսութիւնը պէտք է պապադաւանութիւն ընդունէ։

Նորա հրամանաւ, գիւղերու տանուտերերը (քեթխայ) պարտաւոր էին փողոցներում և հրապարակներում հռչակօրէն յայտնել, որ ռեֆորմական դաւանութիւնը փոխուած է և պարտ են պապադաւանութիւնը կրկին ընդունել։

Յետոյ առաջ քաղաքաբնակիչնե-

րուն հրամայեց կարգ դրիգորեան օրացուցին հետևել, կաթոլիկական տօները սուրբ պահել և երբ ժամը կըտան ոչ միայն տերունական աղօթքը ասել, այլ նաև «Յաստուածածին կոյս ուրախ լեր»։

Գիւղերու տանուտերերը այս հրամանը կատարումին կամայ ակամայ ինչպէս կառավարչութեան հրամանն, և իեզուիտները մինչև աչքի էին պահանջում՝ ժողովրդութեան, սպասի և եկեղեցական ծեսերի վերայ ոչինչ չէր յիշած։ Իեզուիտներու դիտաւորութեամբը՝ պէտք էր, որ պապադաւանութիւնը հաստատի անանկատելի կերպիւ, և այս միտքը կատարվեց այնպէս յաջողակ, որ սպասել չէր կարելի։

Ռեֆորմական պաստօրները իւրեանց սպասաւորութիւններից զրկուեցին։

Հոգեւոր պարտէին կամ պապադաւանութիւնը ընդունեն կամ շատ կարճ միջոցում իւրեանց եկեղեցիները թողնեն և դաւառիցը դուրս գնան։ Այս պատճառաւ Հոցա մեծ մասը դաւառից դուրս եկան։ Բայց մի քանիսին արձակութիւն տուեցին մնալու, միայն առանց սպասաւորութեան և սոցա թւումը գտնուումը պաստօր Յովհան-Յակոբը-Հեղինները, որ մնաց Կիներոդում։

Հեղուիտները կոմնուհիցը, ամէնից շատ էին անբաւական։ Հա, որ պրոտեստական հերետիկոսութեան ջերմեռանդ պահապան էր, նոցա բանը շատ դժուարացնումը, բայց կոմը պատերնեբուն արգելել էր նորա վերայ խօսել։ Իւր կողմանէ կոմնուհին, իւր կրօնաւոր հանդիսանց մէջ հաստատ, քանի պապադաւանութիւնը տարածումը իւր հայրենիքում, այնքան աւելի ջերմեռանդ էր կատարում իւր բարոյական և եկեղեցական պարտաւորութիւնները։ Հեղուիտները իւրեանք հարկադրուած էին խոստովանիլ, որ նա մի սուրբ կեանք է վարում։ Ամենայն օր կոմնուհին մի քանի ժամ աղօթքներու և աստուածաշնչական կարդացողութեան էր ընծայում, և այս ժամանակ նորա դրան կանայքը ամենեքեանքն էլ պարտաւոր էին նորա մօտ ներկայ գտնվել։ Այս ժամանակից սկսեալ Հադամնրայի ամրոցում ամենախիստ բարոյականութիւն և ողջախոհութիւն էր տիրում, ինչպէս ըեֆորմական բարեկարգութիւնները հրամայում էին։ Կոմնուհին այս քրիստոնէական բարեկարգութեանը փոքր առ փոքր

պալատի բոլոր ծառաները ստորադրեց, մինչև անգամ կաթոլիկ ծառաները եւ։ Այստեղ լիալի պայծառութեամբ և վսեմութեամբ երևումէր որ բարքի անպարսաւելի մաքրութիւնը և խիստ բարեկարգութիւնը կազմումէ ռեֆորմական դաւանութեան թէ և ամենախիստ, բայց ընդ նմին և ամենազօրեղ կարգադրութիւնը։ Կոմնուհին ամէն շաբաթ հաղորդումէր։ Այն օրը, երբ նա հաղորդումէր, ամենախիստ ապաշխարութեան մէջ էր անց կացնում։ Միւրակէ և տօնաւոր օրերը ոչ մի ժամանակ աշխարհական պարապմունքներով չը պէտք էր պարապած։

Կոմնուհին, թէև իւր դաւանական կարգադրութիւններու կատարողութեան մէջ այսպէս խիստ էր, այնու ամենայնիւ

այլադաւանները հանար ոչինչ ատելութիւն չէր զգում, մանաւանդ իւր ամուսնոյ համար։ այլ ընդ հակառակը՝ նորա պապադաւանութիւն ընդունելը, կարծես թէ, ամենևին չը պակասեցրեց կոմնուհւոյ սէրը և յարգանքը դէպ 'ի նա։ Այստեղ, նորա աղնիւ հաշտող կանացութիւնը, նորա հոգւոյ բոլոր ազատութիւնը, բոլոր վեհափառութիւնը մի զարմանալի լուսով փայլումէր։ Կոմնի համար՝ կենցաղավարութեան այս սաստիկ խստութիւնը հազիւ նկատելի էր։ Այն օրերը, որ կոմնը պահք էր պահում, կոմնուհին նոյնպէս պահում էր, և այն ժամանակ, նաև իւր սեպհական սենեակներումը, ուտիսուայ կերակուրներից՝ ոչինչ չ'էր գործածում, որ նորա պապադաւան ծառաները չը գայթակ-

ղուին։ Այնթե կոմնը ներկայ չէր լինում, այնու ամենայնիւ նա այս կանոնները պահում էր որդւոց համար, որք պապադաւանութեան մէջ էին կրթւում։ Ոչ մի ժամանակ նա կոմնի հետ չէր խօսում իւր դաւանական համոզմունքներու վերայ, որովհետև գիտէր, որ նա, թէ և ամենևին ուրիշ պատճառներով էր պապադաւանութիւնը ընդունել, այնու ամենայնիւ իւր համոզմունքներում այնքան-էլ հաստատ էր, որքան նա ինքը։ Այնպէս թոյլ չէր տալիս, որ ոք և իցէ իւր դաւանութեան վերայ մէկ խօսք ասէ։ Այս կերպով յաջողեց նորան շատ դժուարին գործ, — իւր ամուսնոյ հետ լիակի համաձայնութեամբ կեանք վարել։ Կոմնը նորա հեզութեան և բարքերու մաքրութեան համար՝ մինչև այնքան նո-

րան պատուումէր, որ միանգամ չընայելով պատեր Պրակի զարհուրանքին, հենց նորա երեսին ասաց, թէ՝ կոմսուհին կըփրկուի, թէ և միափրկիչ եկեղեցւոյ անդամ չէ, որովհետև այսպիսի մի հերձուածով, ամենագէտ Աստուծոյ առաջին, մի հազար լաւ պապադաւան արժէ։

Այս հասարակ կոմնի դրանը՝ պապադաւանութեան և պրոտեստանտութեան մի խառնուածք կար։ Այս, մանաւանդ, Ճաշուայ սեղանի վերայ էր երևում, որ առաջ ընտանեկան էր, բայց կոմնի Վենայից յետ դառնալուց՝ առաւել բազմաթիւ դառաւ, և ընտանեկան հաց-կերութիւնը մի քաղաքականութեան երևոյթ առաւ։ Ինչպէս բոլոր կոմնի ընտանիքը, բաց՝ի ամենափոքր երեխայքը,

այստեղ միշտ ներկայ էին գանուում (որովհետև այս էր կոմնուհուն հաստատ կամքը), այնու ամենայնիւ ճաշը այժմ հասարակական դառաւ, և այն ճառերը, որք այստեղ ասուումէին, շատ անգամ կառաւարութեան վերայ հարցմունքները աւելի դիւրին էին վճռուում, քան կոմսի առանձնարանում եղած ամենաերկայն վէճերը։

Կոմսը ոչ միայն բոլոր իւր բարձրաստիճանաւորներուն էր իւր ճաշին հրաւիրում; այլև երևելի քաղաքացւոց նմանապէս, որ կարողանայ նոցա խորհրդածութեան կերպը բոլորովին իմանալ, նոցա իեղուիտներուն մօտիկացնել և շնչել նոցա հոգւոյ մէջ՝ ժողովուրդը պապաղաւան դարձնելու համար այն եռանդը, որ իւրեան ոգևորումէր։ Նոցա թւումը

երևելի պրոտեստանտեան պաստօրները նոյնպէս հրաւիրուած էին լինում, թէև զրկուած էին իւրեանց պարտաւորութիւններից։ Կոմսը դեռ յոյս ունէր նոցանից մի քանիսի հոգին բռնել, և բաց 'ի այս, նա կամենումէր նորանցով իւր սեղանական խօսակցութիւնը աւելցնել։ Պրակև Լինգել իեզուիտները, երկուքնէլ, նորա ամենօրեայ հիւրերն էին, և կոմսը մեծ զուարճութիւն էր ստանում նոցա հետ միասին ըմբոստանցւոց պաստօրներ որսալում։ Բայց այս վերջիններու մեծ մասը այնքան խելօք էին, որ չէին սկսում այնպիսի մի կռիւ, որում պարտ էին մարտնչել ձեռքերը կապած։ Այն եթէ նոցանից գանուում-էլ էր վիճող, այնու ամենայնիւ միշտ յաղթուումէր, որովհետև միայն նորա հա-

կառավարդը իրաւունք ուներ վերջի և վճռական դատողութիւնը տալ, այլ ոչ թէ նա, և բաց 'ի այս, անձարտար դիւղացի պաստօրները, իեզուիտներու ձարտարախօսութիւնով շփոթվուած, դիւրին թաղակ էին ընկնում։ Այսպիսի դիպուածներ կոմսին մեծ բաւականութիւն էին հասցնում։ Այս ողորմած էր լինում դէպ 'ի այն ըռֆորմացւոց պաստօրները, որոնք, իւրեանց տաքութեամբը և սիրովը վիճաբանել, նորա դրան ծաղրածու էին դառնում. ընդհակառակը նոցանից զգոյշներուն և խելքներուն ատում էր։

Այս վերջերի մէկն էր պաստօր Լիվլիները, որ այսօր կոմսի նախարար Շպրենգերի և երկու իեզուիտներու հետ, հրաւիրուած էր կոմսական ճաշին։

Այս անգամ, այս ճաշը ընտանեկան էր։ Կոմսը շատ ցանկանում էր, որ Լիվլիները, որ բոլոր շրջակայում ամէնից խելք և ուսեալ պաստօրն էր համարում, իեզուիտներու հետ ոկսի վիճաբանել։ Լոկոյն հացը օրհնելու աղօթքից յետ, պէտք էր, որ պատեր Պրակը նորա հետ, այս երևելի առածի վերայ " cujus regio, ejus et religio „ (*), սկսի դատողութիւն։ Այս այն առածն էր, որի կարողութեամբը՝ կոմսը կարծում էր, որ իրաւունք ունի խորամանկութեամբ և իշխանութեամբ բոլոր իւր տերութիւնը պապաղաւան դարձնել, որովհետև ինքը արդէն դարձել էր։ Մինչև այժմ միայն մի քանիքն էին

(*) Որոյ թագաւորութիւն, նորա և դաւանութիւն։

համարձակւում այս առածի Ճշմարտութեան վերայ կասկածել, որովհետև սովորաբար հաւատում էին, որ Աստուած է թագաւորներուն իշխանութիւն տուողը, բայց այժմ հանգամանքները փոխուեցան և շատերը սկսեցին չըհաւատալ այս առածի Ճշմարտութեանը և մեծ խստութեամբ դատում էին նորա վերայ։

Լոկոյն Պրակը առաջարկեց Նիզիներին այս քաղաքական վարդապետութիւնը և հարցրեց նորան թէ՝ ինչպէս կարող է նա համեմատել իւր հպատակական պարտաւորութիւնները՝ ըեֆորմական մնալոյ ցանկութեան հետ, երբ նորա թագաւորը և տէրը պապադաւան է դարձել։ Այս ասելով նա ծուռ աչքով Շպրենդերի վերայ նայեց, որովհետև

ոչ ոք Ճշմարիտը չըգիտէր, — ըեֆորմական է նա, թէ պապադաւան։

Նիզիները մեծ սառնութեամբ պատասխանեց.

— Աւետարանում ոչ միտեղ չէ գրած. “cujus regio, ejus et religio”: Այթէ կառաւարութիւնը մեզանից պահանջէր, որ մենք Աստուծոյ ընդդէմ վարվենք և դորանով մեր հոգւոյ փրկութեանը խանգարենք, որ Աստուծոյ չխոնարհվենք և չխոստովանենք Ճշմարիտ քարոզութիւնը և ուղղափառ դաւանութիւնը, որ Սուրբ Հաղորդութիւնը այնպէս չ՝ընդունենք, ինչպէս Քրիստոս-Փրկիչը մեզ հրամայել ընդունել, այն ժամանակ մենք իրաւունք կունենայինք պատասխանելու. «Մենք պարտենք առաւել Աստուծոյ խոնարհվիլ, քան

մարդկանց։» Ահա որ այս էր պատճառը, որ մարտիրոսները չարչարուեցան և մեռան։ Այն զօրեղները, որոնք Սուրբ Պետրոսին գլխատեցին, երևի իւրեանց գլխերումը մի այսպիսի վարդապետութիւն ունէին դրած. “cujus regio, ejus et religio„: Ուրեմն, միթէ՞ պէտք էր, որ այս առաքեալները կառաւարչութեան կամքը կատարէին և հեթանոս դառնային։

— Ուրեմն դուք “cujus regio, ejus et religio„ վարդապետութեան Ճշմարտութիւնը հերքո՞ւմէք, զոչեց բարկութիւնից կարմրած՝ իեզուիտը, որովհետև նա արդէն կարծումէր, որ վերջապէս պատօրը որոգայթ ընկաւ։

— Ես այս ասացի միայն փոքր ինչ սիրտս թեթևացնելու համար, որ կարողանամ հանգստութեամբ իմ սուպս (բոզբաշ) ուտել, ասաց Եղիշները սառնապէս։ Այժմ ես լաւ կկենամ։

Կոմսը ատելութեամբ նորա վերայ նայեց և ասաց.

— Օ՜գուշացէք, Եղիշներ, դուք, ձեր սիրտը թեթևացնելով, թեքով աղամանը շուռ տուիք։ Այս լաւ նշան չէ։ Այս դիպուածքը հիւրի և տանտիրոջ մէջ խռովութիւն է նախագուշակում։

— Աստուած ոչ անէ, որ ես իմ թագաւորիս հետ խռովեմ, ասաց համեստութեամբ պատօրը և խոսակցութիւնը առ ժամանակ դադարեց։

Կոմսը բարկութեամբ և ունքերը ոլորելով պատերը Ինգելի ականջին ասաց։

— «Իմ և ես Ղիզիներին մէջ, ինչպէս շան և կատուի մէջ, մի բնական թշնամութիւն կայ։ Թէ և նա ինձի ուրիշներից աւելի ոչինչ վատ բան չէ պատճառել, այնու ամենայնիւ ես չեմ կարողանում անտարբերաբար այս մարդուս տեսնել։ Պէտք է, որ իսկ և այսօր մենք նորան ցանցաղի վերայ նստացնենք։»

Երբ խորովածը բերին, կոմսը իւր հիւրերու կենացը խմեց։ Այս անգամ նոյնպէս՝ նա Ղիզիներին դպչել կամեցաւ։

— Կարծեմ, սիրելի պաստօր, որ կենաց խմելը ձեր դաւանութեան ընդդէմ չէ, ասաց նա։ — Այց որովհետև դուք հաւատումէք և անումէք միայն այն, ինչ Աստուածաշնչի մէջը գրած է, ես կ՚ցանկանայի ձեզ խնդրել, որ ինձ ասէք, արդեօք Աստուածաշնչում թոյլ է տուած կենաց խմել, կամ կենաց բաժակ արտագոչել։

Կոմսը հաւաստի էր, որ Աստուածաշնչում այս բանի վերայ ոչ մի բառ չէ ասած, բայց սխալվեց, կարծելով թէ Ղիզիները սորանով կբռնուի։ Պաստօրը ոտի կանգնեց և ուրախութիւնից իւր մէջ ժպտելով ասաց.

— Երեմիայ մարգարէն ասումէ, թէ Իրեայքը Բաղման յետ սեղանի վերայ գինոյ բաժակներով ողջունում էին իւրեար և ընդ նմին մխիթարում, բայց մեկնիչներու ասելովը՝ նոքա գինոյ բաժակներով իրար առողջութիւն և երկար կեանք էին ցանկանում։ Եհէմը Աստաշէս, պարսից թագաւորի տակառապետները։ Երբ բաժակը նորա ձեռքն էր տալիս, նա միշտ ասումէր. «Աքա՛յ,

Աստուած քեզ երկար կեանք շնորհի։»
Արեթէ՞ այս միև նոյնը չէ, թէ կենաց
խմելը։ Տերը ինքը, ինչպէս ասում է ե-
թանասուն և չորրորդ սաղմոսը, բաժակը
ուժեղ գինով լքցրեց և տուաւ բարե-
պաշտներուն, որք խմումէին, իբր սուրբ
կեանքի կենացը, մինչդեռ անօրէնները
մնուր էին լափում («Օ՜ այս խոնարհ առ-
նէ և զսոյն բարձրացուցանէ, բաժակ 'ի
ձեռին Տեառն գինի լի՝ անարակ արկեալ
և խոնարհեցոյց յայսմանէ յայս։ Սակայն
մնուր նորա ոչ սպառեսցի, և արբցեն
ամենայն մեղաւորք երկրի (Սաղմ. Հա-
8. 9.)։ Այս մտքով և Դաւիթ մարգա-
րէն հարիւր քսան և հինգերրորդ սաղ-
մոսումը ասելով թէ՝ «առցից զբաժակ
կենդանութեան,» իւր հոգուն առողջու-
թիւն է ցանկանում։ Այս վերջապէս, եթէ

մենք համարձակվինք ամենամեղաւորը ա-
մենասուրբի հետ համեմատցնել, արդեօք
Խաղարջակերաց Այրեկոյեան բաժակը՝
կենաց բաժակ չէ՞ր, որ Քրիստոս, մեր
Աստուածը, տուեց բոլոր մեղաւոր մարդ-
կութեան, նորա փրկութեան համար։

— Մեր պաստօրը հեշտութեամբ
կարողանում հարկադրել, որ Աստուա-
ծաշնչի վկայութիւնները անպատճառ
ասեն այն, ինչ ինքը կամենում, ասաց
կոմսը ժպտելով և իեզուիտներու վե-
րայ նայելով։—Պէտք է խոստովանիլ,
որ նա բոլոր Աստուածաշունչը գիտէ,
ինչպէս «Հայր մերը։»

Այստեղ նա իւր խօսքը դարձրեց
դէպ 'ի Շպրենգերը, որ խորամանկ
և ծառայութեան մէջ ծերացած ան-
ամուսին էր, և ամենայն բանը դատա-

պարտում և դէպ 'ի կատակ էր դարձնում։ Այս պատճառաւ՝ նորա բնութիւնը ամենուն համար անգուշակելի էր մնացել։ Այնու ամենայնիւ նա, որովհետև խորամանկ հրովարտագէտ և քաղաքական կառաւարչութեան մէջ փորցուած մարդ էր, իւր փառասէր իշխանին շատ օգտաւէտ էր։

— Դուք ամենևին լուռ էք կացել, սիրելի խորհրդատու, ասաց նորան կոմսը։ — Երևի դուք մոռածումէք, թէ, ուր խօսումեն հոգևորականները, այնտեղ աշխարհականները պէտք է լռեն։

Խորհրդատուն իւր ծաղրական ոճով պատասխանեց։

— Այո՛ երա՛, որ աշխարհականները պէտք է լռեն, երբ հոգևորականները խօսումեն։ Որա վերայ ես ձեզ մի ոտանաւոր կ'ասեմ.

Presbyteri labiis orant, Laicique laborant,
Plebs, dum pro populo presbyter orat, arat. (*)

— Այո՛հ, սիրելի խորհրդատու, ինձ միշտ ասելեն, որ դուք յանկարծակի լատինացոց լեզուաւ հիանալի ոտանաւորներ էք ասում, բայցեւ չէի երևակայել, որ մի րոպէյում՝ դուք կարողէք գտնել այսպիսի կծողականները, սրամիտները և ընդ նմին այսպիսի ընտիրները։

— Այս ոտանաւորները, Ձեր Մեծութիւնը, այսպիսի լաւ խորոված ուտելիս չեն ասուած, այլ ընդհակառակը սովից է, որ այսպէս կծողական և սրամիտ են դուրս եկել։ Որքա իմն էլ չեն, այլ մէկ Անգղիացւոյ շարադրած են, որի անունը

(*) Քահանայքը քարոզումեն, այլ ժողովուրդը աշխատումէ։ Ոմանիկները, մինչդեռ քահանան ժողովրդի վերայ քարոզէ կարդում, վարեն անում։

Ջ.ան-Ֆուէն էր, որ ուսումնարանում վարժապետ էր և որ ծանր խղճութեան մէջ մեռաւ։ Նորա շարադրութիւնները այնքան խելացի և սրամիտն, որ այժմ ամենայն տեղ կրկին տպւումն։ Եթէ այս մարդը իւր կեանքումը ստանար այն փողերու կէսը, որ այժմ գրավաճառները նորա շարադրութիւններից ստանումն, 'ի հարկէ սովից չէր մեռնիլ։ Բայց նորա վերնագիրները արդէօք այդպէս հիանալի և սրամիտ կլինէին, եթէ նա ինքը ուտելու բան ունենար,— այդ այլ հարցմունքէ։

Բայց կոմսը նորա նկատողութեան այս վերջի խօսքերը չլսեց։ Նորան մի նամակ մատուցին, որ բոլոր նորա ուշադրութիւնը գրաւեց, և երևի նորան մի տհաճելի համբաւ էր հաղորդում,

որովհետև նորա երեսը շատ սաստկացաւ և շփոթուեց։ Նա ոտը գետինը խփեց և բարկութեամբ նամակը սեղանի վերայ ձգեց։ Նորա առաջիհայեցուածքը Նիզինների վերայ ընկաւ։ Այս հայեցուածքը մինչ ցվերին աստիճանի բարկութեան և մնհագին ատելութեան հայեցուածք էր։

Կոմսը, բարկութիւնից շնչասպառ, ինչ երբէք չէին տեսած, որ նորա հետ պատահի (որովհետև նա կարողանումէր միշտ հմտութեամբ ինքը իրան տիրապետել), ընդհատած ձայնիւ գոչեց.

— Պէտքէ, որ մատնիչը օրինաւոր կերպիւ պատժուի, ես նենգաւորներով և երդմնազանցականներով շրջապատածեմ։ անպիտանին այսպիսի մատնողութեան համար, պէտքէ շուտով գլխատենք։

Այս գիտեմ ՞ով է մնանիչը. ես նորան պատուելով, իմ տունս էի ընդունած, օչ մի բան նորանից չէի թագցնում, այլ նա, ինչպէս մի Հուդայ Իսկարիոտացի, սորանից օգուտ քաղեց և, ինչպէս մնանիչ, հաղորդեց իմ թշնամիներուս այն, ինչ կարողացաւ իմանալ միայն իմ անկասկածութիւնից։ Պատօր Նիզիներ, դուք էլ իմ հիւրս չէք, դուք բանտարկած էք։ Ուռ կացէք, դուք կարողէք պատասխանել, երբ ձեզ կ'հարցնեմ։ Օգուշացէք, Նիզիներ, ձեզ գթութիւն չէ լինելու. տեղիցդ վեր չ'կենաք, մինչև ձեզ բանտ տանեն։

Այս խօսքերիս մի տանջելի լռութիւն եռևեց։ Այմենքեանը նստած էին, ինչպէս քարացած, մինչև անգամ երկու իեղուիտներն-էլ հարցական դէմքով և զարմանալով նայումէին իրար վերայ։

Կոմնուհին, առաջինը կարողացաւ ուշի գալ և կարողանալ մտածել և խօսել։ Նա դարձաւ դէպ 'ի կոմը և ասաց նորան.

— Դո խօսքերդ զարհուրելի են։ Դո միաքդ խառնածէ, կարծես թէ ջերմուռմես։ Ուշի ե՛կ, այդ ինչէ պատահել, պատմի՛ր մեզ, եթէ գաղտնիք չէ, և հանգստութեամբ պատմելով, դու ինքդ նոյնպէս կարողես հանգիստ ամենայն բանը քննել։

Կոմը իւր չորս կողմը նայեց, կարծես թէ նորա մտքերը հեռու էին և նա միայն այժմ նկատեց, թէ ինչ հասարակութեան մէջ էր գտնուում։ Այմենևին ուշի գալով և իւր սովորական հան-

գստութիւն վեր առնելով, բայց դեռ
ևս խիստ դէմքով, ասաց.

— Դու գիտես, Ուրսուլա, որ Հոլ-
լանդացւոց թևաւոր գունտերը, որ բա-
ղոն Գենտը Սուլեստից՝ Վ. Եստերվալդ
երկրի միջովը՝ ուղարկում, այս միջոց-
ներումն մեզ վերայ են արձակուում,
նեղումն մեզ և զարհուրացնում մեր
ձորերը։ Ինքա այն տեղ, ուր միայն
պապաղաւան քահանայի, կամ առհասա-
րակ կղերի, սարկաւագի, կամ ուսուցչի
հոտ են առնում, որսումն նոցա, ինչպէս
ամենաջերմեռանդ որսորդը՝ քսանեղ-
ջերեայ եղջերուն կ'որսայ։ Ինքա շատ
կ'ցանկանային իմ երկու պատերներիս
նոյնպէս յափշտակել, բայց այս բանը
նոցա չի յաջողիլ. Ճանապարհորդու-
թեան ժամանակ՝ միշտ քսան ձիաւոր

նորանց հետևումն։ Ա՛հ, Տեր ողորմեա,
ահա՛ ինչ ժամանակներ են եկել։ Այս,
դեռ ևս իմ սեպհական տերութիւնումն,
չեմ կարողանում անձնիշխան լինել։
Այս հերձուածողները Ինրաունֆելզում
այսպիսի որսով են պարապում։
Շպրենգեր, այն տեղից ոչինչ նորհամ-
բաւ չեք ստացել։

— Ներեցէք, Ձեր Լուսափայլու-
թիւնը, այնտեղ Հոլլանդացիք չեն սկ-
սել այս բանը, այլ Ինրաունֆելզ բերդի
վերատեսուչն է սկսել։ Ինչի կոմսին
անբաւականութիւն պատճառելու հա-
մար, նա Լուսադ հինգշաբթի օրը հրա-
մայեց Դաուբորնի ռեֆորմական պաս-
տորը բռնել։ Որան քնաթաթախ ան-
կողնից դուրս քարշեցին և Ինրաուն-
ֆելզ բերդը բերին և բերդապետը

նորան թափելու համար կոմսից ինն հա-
բիւր տալլեր պահանջեց։ Այն ժամանակ
Հոլլանդացիք իւրեանց Ֆելդմարշալ
կոմսին վրէժխնդիր լինելու համար,
նոյնպէս խորամանկութիւն բանացրին։
Նոքա Աղեմբուրգ վանքը մտան, պրի-
օրին բռնեցին և պահանջեցին նոյնպէս
ինն հարիւր տալլեր։ Ինչ պէտք էր
արած։ Ա՛ռնեցին, ինչպէս և իցէ,
հաշտուիլ և շատ հետաքրքիր բան դուրս
եկաւ. երկու կողմից էլ վճարեցին ինն
հարիւր տալլեր և դերձակները աղատեցին։
Այսպէս նոքա վերջումը մնացին այնպէս,
ինչպէս սկզբումն էին, միայն նոցա աշ-
խատանքները 'ի զուր տեղը կորան։
Այդ կայսերական բերդապետը արդէն
Հոլլանդացոց ցոյց էր տուել, թէ ինչ-
քան օգուտ կարողէն ստանալ, եթէ քա-

հանայք որսան և յետոյ նոցա թափելու
համար դէն պահանջէն, և այժմ նոցա
զինուորները այս բանով պարապումեն
նոյնպէս ջերմեռանդ, ինչպէս նոցա հայ-
րենակիցները փայլունի (ձուկն) որսով։
Նոքա այս որսը այնքան սիրեցին, որ
դորա համար իւրեանց իսկ ծառայու-
թիւնը թողեցին։ Այդ ամենից վատը
այնէ, որ շուրջմոլիկներու մի խուժան,
ինչպէս արագադնաց շներ, այս որսորդ-
ներուն միշտ ուղեկից են լինում և բոլոր
Ա՛էստֆալի միջումը և Լանի եղերք-
ներովը, իեզուիտներուն ետևեւով, թա-
փառումեն։

— Բաւական է, ասաց կոմսը, խոր-
հրդատուի հեգնական ոճիցը փոքր ինչ
անբաւականացած։ — Մենք առանց դո-
րա էլ ամօթ բերանք մեզ վերայ, որ

պապադաւան քարոզիչները, որոց ես հրաւիրեցի իմ տերութիւնս՝ այս սուրբ գործը վերջացնելու համար, պէտքէր պաստօրական սենեակներից դուրս դային և գիւղացւոց խրճիթներում թաք կենային, որ չբռնուեն. որ նոքա գիւղացիի շորերով՝ գիւղից-գիւղ մանեն դալիս իւրեանց պարտաւորութիւնները կատարելու համար. որ նոցա հրապարակական ժամասաց-ութեան ժամանակը, նոցա ապահովութեան համար եկեղեցւոյ դրան մօտ պէտքէ մեծ զօրք կանգնի։ Այս ահա այժմ, պաստօր Լիզիներ, ինձ գրումեն, թէ, չնայելով ամենայն զգուշութեանց, մի մանիչի ցոյց տալով, Հոլանդացիք իմացելեն ոչ միայն կաթոլիկական քարոզիչներու ամէն թաքուն տեղերը, այլ և ամէն նշաննե-

ը, որով կարելի է գիւղացի շորերում բոլոր Հադամարայի հողում և Լինեռոդի շրջակայում նոցա ճանաչել։ Այս մատնողութեան յետևանքները այն են, որ երեկ գիշեր՝ այս աւազակները իմ տերութիւնս են մտել, բռնելեն բոլոր քահանաներուն, որոնց ես Վենայից հրաւիրելեմ ինձ մօտ, նոցա Յուլեստ են տարել և նոցա թափելու համար մեծ դումար են պահանջում։ Շպրենգէր, միթէ՞ դուք այս սատանայական բանի վերայ ոչինչ համբաւ չէք լսել։

Կարծես խորհրդատուի ուշքը վրան չէր։

— Համբաւ, կոմս, ո՛չ։ Լեզուիտ Գուլդգաուզենի բանի վերայ, որ դուք պատմեցիք, ես փոքր ինչ լսելեմ....

— Այդ ևս ինչէ, դոչեց կոմսը։ —

Այս ոչինչ չեմ իմացել իեզուիտ Գուլդ-գաուզենի վերայ։

Խորհրդատուն շփոթուեցաւ, բայց շուտով կրկին հանդստացաւ։

— Ինքա այս իեզուիտին ևս բռնել են, ասաց նա։ — Որան հագցրել են զինուորի շոր և լայն Հոլլանդացւոց վարտիկ և ձեռքը հրացան են տուել։ Ասում են, թէ հաստ պատերը այս շորերում մի շատ խղճալի տեսք ուներ։ Շորերու կարերը բոլորովին քանդուել են, որով հետև բոլոր Հոլլանդացւոց զօրքում չկարողացան մի այսպիսի շոր գտնել, որ նորա համար նեղ չլիներ։ Դաց 'ի այս, խեղճ իեզուիտին հարկադրել են շուտ քայլել, որ կարողանայ նորանց հասնել։ Դայց, ասումեն, նա տասը րոպէ-ել չ'կարողացաւ ոտին կանգնել, այլ վայր

ընկաւ։ Միով բանիւ նորան զինուոր են շինել։

— Ինչպէս, և դուք միայն այժմ էք այս բանի վերայ ինձ պատմում, գոչեց զայրացած կոմը։

— Ներեցէք, Ձեր Լուսափայլութիւնը, այս բաները ես իմացայ փոքր ժամանակ ձաշից առաջ և ընդ նմին սա հաստատ համբաւ չէ, այլ միայն ձայն է։ Ես չըհամարձակուեցայ խանդարել ձեր ձաշը այսպիսի դատարկաբանութեամբ, այլ մտադրել էի ձաշից յետ այս բանը անմիջապէս ձեզ իմաց անել։

— Ուրեմն, դուք կարծումէք թէ այսպիսի համբաւը առաւել մարսական է, քան թէ ախորժակ բաց անող։ Դայց Աստուածս վկայ է, այժմ ժամանակ չէ կատակելու։ մատնիչը պէտք է պատ-

ժուի։ Միայն այն մարդը կարող էր
ցոյց տալ Հոլլանդացւոց մեր քահանա-
ներու թագ կենալու տեղերը և նոցա
ճանաչելու նշանները, դեպ 'ի որը-որ
ես հաւատ եմ ունեցած, որովհետև ա-
մենայուսալի մարդկանցից, միայն փոքր-
երնեն իմանում այս գաղտնիքը, բայց
այս մատնիչը պէտք է որ այնպիսի մարդ
լինի, որ Մինեռոդու ամէն շրջակայ գիւ-
ղերը և տները, ինչպէս իւր տունը,
ճանաչում լինի։ Օ գուշացէք, Սիզի-
ներ, դուք ձեր գլխովը պատասխանատու
կը լինէք, եթէ այս ձեր բանը լինի։
Շուտով պէտք է գտնել մատնիչը և
իսկոյն պատժել նորան։ Այստեղ օրի-
նաւոր արտադրութիւն կատարելու ժա-
մանակ չէկայ, — այստեղ հարկաւորէ պա-
տիժ ըստ օրինաց։ Սիզիներ, ձեզ հէնց

այսօր երեկոյեան կը դատեն քրէական
դատաստանաւ, և եթէ դուք այսօր ես
չընկնէք դահճի ձեռքը, և 'ի վերայ
ամենայն սպասողութեան, ճշմարտուէք,
այնու ամենայնիւ վաղը պէտք է հեռա-
նաք Հադամարայից։ Այժմ ես-էլ չեմ
կամենում ոչ մի բեֆորմական պաստօր
տեսնել, ես չեմ կամենում թողնել ինձ
մօտ այնպիսի մարդկանց, որք, ինչպէս
դուք, խափանումեն իմ իրաւունքս —
իմ ժողովուրդս պապադաւան դարձ-
նել։ Որք, խղճմտանաց պարտաւորու-
թեամբ, իւրեանց պարտաւոր են հա-
մարում իմ մատնիչներս լինել, և դեռ
ես կարծում են, թէ չբնարհուելով
ինձ, այնպէս են վարուում, ինչպէս
Պօղոս և Պետրոս, սուրբ առաքեալ-
ները և մարտիրոսները հեթանոս Հռով-

մեացող կառաւարութեան հետ վար-
վեցին։

Նիզիները ոչինչ չըպատասխանեց։
Նա իւր հայեցուածքը ուղղեց դէպ 'ի
կամուրջին, որպէս թէ միայն նորանից
էր սպասում իւրեան փրկութիւն։ Ու
ճշմարիտ, երբ կոմսը բոլորովին լռեց,
կոմսուհին ասաց նորան։

— Դու խօսումես այժմ, ինչպէս այս
աշխարհքիս զօրաւոր, բայց մի՛ մռաանար,
որ Տէր Աստուածը նոյնպէս այս աշ-
խարհքիս զօրաւորներից, նորանց զօրու-
թեան համեմատ, հաշիւ կըպահանջի։
Այսօր այստեղ շատ զանազան լուրեր են
պատմել, թոյլ տուր որ ես նոյնպէս
պատմեմ քեզ մի երևելի անցք, որ այս-
օր առաւօտ մի գիւղացի ինձ պատմեց։
Այժմ ինձ թւում է, որ Աստուծոյ

կամքն էր, որ ես այսօր լսեցի և կարող եմ
այս բոպէիս քեզ պատմել։ Տասը տարի
սորանից առաջ Լասերսգաուզէն քաղա-
քի մօտ, որ է Վէիլ գետի վերայ, բնակ-
վում էր մի աղնուական Վերդորֆ ա-
նունով, միայնակ մարդ, որ չունէր ոչ
ազգական և ոչ բարեկամներ։ Յանկարծ
նա կորաւ, և ոչ ոք չըգիտէր, որտեղ է։
Դայց ահա երկու ամիս սորանից առաջ,
դատաստանը թաքուն վկայութիւն է մըտ-
նում, իբր թէ ոմն, Կրիֆդելբախցի,
Յովհաննէս Շիւտց, որ էր վատ վարվողու-
թեան մարդ, Վերդորֆին Լասերսգաու-
զէնի մօտ անտառում սպանել է։ Շիւտ-
ցին բռնեցին և բերան դատաստան։ Նա
չըխոստովանվեց, թէ այս մեղքը կատա-
րել է, բայց տանջանքը, որով ստիպում
էին նորան խոստովանել, նորանից խոս-

տովանութիւն դուրս բերաւ։ Նրան տա-
րան անտառը, որ Նա ցոյց տայ այն տեղը,
ուր Նա թաղել էր սպանուածը։ Նա
չըկարողացաւ գտնել տեղը, բայց նոր
տանջանքներու վախից, Նա ասաց թէ
կարող չէ միտը բերել այն տեղը, որով-
հետև արդէն երկու տարի անցած է այս
պատահմունքից։ Նորան մնահպարտե-
ցին։ Պատաւորը, երկար չըմտածելով,
ստորագրեց մնհալձուի թուղթը։ Ամե-
նեքեանքը համոզուածելին, որ նա կատա-
րել է այս յանցանքը և չէին կամենում
բանը յետ դցել։ Պէտք էր օրինաւոր
պատժել։ Այս ահա, մի շաբաթ սորանից
առաջ, Յովհանն Շիւտցը վեր ելաւ
Էշաֆօտ (այն տեղը, ուր գլխատումեն
մնհապարտներուն)։ Էշաֆօտի վերայ
տարաբաղդը հաստատ ձայնով ասաց իւր

շրջակայ ժողովրդին. «Այժմ ես պէտք
է մեռնեմ այն պատճառաւ, իբր թէ
ես սպանել եմ պարոն Վերդորֆին։
Բայց Աստուած ինձ զրկէ՛ արքայու-
թիւնից, եթէ, երբ և իցէ բոլոր կեան-
քումն, ճանաչում լինի նորան։» Այս,
չոքելով կոճղի մօտ, գոչեց միւս անգամ։
«Յուսամ, որ իմ անմեղութիւնս յայտ-
նուի, և, եթէ Աստուծոյ կամքը լինի, այս
աղնուաղնը յետ դառնայ ողջ և առողջ,
յառաջ քան վայրենի թռչունները ամե-
նեին կ՚ուտեն իմ մարմինս։» Այս ժամա-
նակ նորա գլուխը արիւնաթաթախ վայր
ընկաւ.... ։ Այլ օր պարոն Վերդորֆը
յետ դառաւ։ Տասը տարի առաջ՝
նա գնացել էր պատերազմ և այնտեղ
բաղդաւորութիւն էր փնտռում, ինչ-
պէս հազար նորա նմանները, և գտաւ,

ինչպէս հազարներից փոքրները։ Ահա յետ դառաւ հարուստ և փառքով պատած գնդապետ։ Այո՛, տեսնում ես դատաւորները նոյնպէս համարձակ և շուտով տուեցին վճիռը, ինչպէս այս աշխարհքիս զօրաւորները։ Բայց, մնաց ծի՛ր, ինչպէս է այժմ նոցա հոգւոյ դրութիւնը։ Այնու ամենայնիւ նոքա վարվեցին, ինչպէս հարկներ։ Հիւսցը վատ վարվողութեան մարդ էր, ուրեմն նորան պէտք էր օրինաւոր պատժել։ Այս նոքա պատժեցին, բայց ո՛չ թէ խեղճ յանցաւորին, այլ իւրեանց։

Կոմսը լռեց։

— Տարէ՛ք պաստօրին աշտարակը, ասաց նա յետոյ, և սորանով վերջացաւ այս ճաշը, որպիսին ո՛չ մի ժամանակ ամբոցում չէր տեսված։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ։

Արիւս առաւօտը՝ լուսաբացին, երբ արեգակի դեռ առաջի ճառագայթները թոյլ լուսաւորում էին արևելքը, կոմսը կոմսուհւոյ առանձնարանի դուռը կամաց բաց արեց։ Ահա գիտէր որ կոմսուհին միշտ արեգակի մտնելից առաջ է քնից վերկենում և տեսաւ որ նա ամենևին հագուած՝ աղօթարանի մօտ նստած էր։ Կոմսը լուռ մնաց սենեակի խորութիւնում, մինչև կոմսուհին իւր աղօթքը աւարտեց։

**

Երբ նա աղօթքը աւարտելից՝ վեր կացաւ և կողակիցները իւրեար ողջունեցին, կոմնուհին զարմանալով հարցրեց կոմսի այսպէս վաղ վեր կենալու պատճառը, որովհետև շատ լաւ գիտէր, ինչպէս նա սիրում էր օրը գիշեր շինել՝ այլ գիշերը — օր։

— Այս օրից սկսեալ, ասաց կոմսը ծաղրաբար,—ես կամենում եմ այն թագաւորից, որի անունը շուտով քեզ, ուսեալիդ, յայտնի է, քան թէ ինձ, օրինակ վեր առնել։ Այս այն թագաւորն է, որի համար առաւօտուայ ժամերը այնքան թանգ էին, որ սովորաբար ասում էր. «վա՜յ էն երկրին, որի թագաւորը, կամ իշխանը քնից ուշ է վեր կենում»։ Այլ ես ծաղրաբանելու չեմ եկել քեզ մօտ այսպէս վաղ, այլ,

տեսնում ես, ես բոլոր գիշերը չեմ կարողացել աչքս խփել, որովհետև այս Շուտցի պատմութիւնը չեմ կարողացել գլխից հանել։

— Այլ երեկ պաստօրի վերայ կարդած՝ քրէական դատաստանը ինչ վճիռ տուեց, հարցրեց կոմնուհին նորա խօսքը կտրելով։

— Ինչ դատաստան, ոչինչ դատաստան չէ եղել։ Լիզինները աշտարակում հանգիստ նստած է։ Այս կամենում եմ լաւ մտածել և յետոյ վճռել։ Բոլոր խօսքերը երեկ ոչինչ ազդեցութիւն չունեցան ինձ վերայ, այլ այս գիշեր ես չը կարողացայ էն դատաւորների անզգոյշ վարվողութիւնը մտքիցս հեռացնել, որ կարողանայի փոքր ինչ քնել։ Ինչպէս ճշմարիտ է, որ ցերեկը մարդս ամենևին

ուրիշ է լինում և գիշերը ուրիշ։ Ինչքան ամենապայծառ արեգական ճառագայթը, ամենախորին մթութիւնից զանազանւում է, այնքան և մարդս, երկնային մոլորակների դրութեան համեմատ, փոխւում է։

— Այ, քո փոփոխութեան պատճառը երկնային մոլորակների դրութիւնը չէ, այլ Աստուած Ինքն է, Որ քո սրտի խաւարը հալածեց։ Ահա, նշմարիր այդ սուրբ լոյսը։

Կոմսի սիրտը, ինչպէս սովորաբար պատահում էր, շարժվեց։

— Դաց 'ի քեզ, իմ դրանս ոչ մի մարդ չը կայ, որ ինձ ճշմարիտը ասէր, ասաց նա քնքուշաբար։ — Ուրեմն, ասա ինձ. ինչպէս ես մտածում դու այս բանի վերայ, ինչպէս պէտք է այս բանը վերջացնել։ Դու եթէ իմ տեղս լինէիր, ինչպէս կը վարվէիր, ինչպէս կը բռնէիր մնասնիչը, ինչ պատիժ կը տայիր նորան։ Դայց պէտք է շուտով բռնել և խստոյն պատժել. պէտք է խփել մեղաւորին այնպէս խստոյն, ինչպէս կայծակը. թէչէ յետոյ ամենայն պատիժը ոչինչ ազդեցութիւն չի ունենալ։

— Գիշերների վերայ կասկածելու, բաց 'ի երեկուայ պատմած պատճառները, ուրիշ առաւել հիմնաւոր պատճառ չը կայ. հարցրեց կոմսուհին։

— Այ, չը կայ։

— Ուրեմն արձակիր նորան, յետ դառնայ Վենեդոդ, խոստանալով, որ, մինչև նորան դատաստան չը պահանջեն, այնտեղից ոչ մի մղոն չը հեռանալ։

— Այդ անկարելի բան է, գոչեց

այս առաջարկութիւնից գրեթէ զայրա-
ցած կոմսը։ — Ինչև մենք կ'աշխա-
տենք կամաց-կամաց Ճշմարիտը իմա-
նալ, աղուէսը մեր ձեռքիցը կը փախչի։
Ա՛յս իւր խորհրդակիցներուն կ'իմացնի,
նոքա կը զգուշանան, ապստամբութիւն
կը կազմեն։ . . .

— Ա՛յլ ինչները խորհրդակիցներ չու-
նի. նա ոչինչ ապստամբութեան մէջ
գործակից չէ։ Այթէ նա խօսք տայ, հան-
գիստ տանը կը նստի և ոչ ոքի այդ
բանի վերայ մի խօսք չի ասիլ։ Այս նորա
համար երաշխաւոր կը կանգնեմ։

— Դու, երևի, այդ պաստօրին շատ
լաւ Ճանաչում ես, որ այսպիսի մեծ
բանում, նորա համար այդպէս համարձակ
երաշխաւոր ես կանգնում։ Ա՛յլ, ես
Հովհան Շ. իւտցի վատ պատմութիւնը

չը լիներ, ես կ'իմանայի ինչպէս վար-
վել։ Ա՛յրձակեալ նորան, խօսք առնելով . . .
ո՛չ, այս անկարելի բան է։

Ա՛յս բառերով կոմսը կամենում
էր կոմսուհւոյ սենեակից դուրս գնալ։
Կոմսուհին վսեմաբար ձայնեց.

— Լուրեմն, ինչո՞ւ պէտք է զարմա-
նալ, որ ասում են թէ՝ իշխաններուն
ամենից դժուար է Աստուծոյ արքայու-
թիւնը գտնել, երբ նոքա արդար և
սրտակից խորհրդատուի ձայնը այսպէս
ակամայ են լսում։

Կոմսը, գրեթէ զարհուրած, շեմ-
քումը կանգնեց և երկայն ժամանակ
նորա վերայ նայեց. յետոյ հեռացաւ ա-
ռանց մի բառ արտասանելու։

Բայց նա արդէն, դուրս գալուց ա-

ռաջ, մտադրեալ էր պաստօրին ալնա-
կեալ, որ գնայ Յինեբոդ, եթէ նա
խոստանար այնտեղից չը հեռանալ, մին-
չև նորան դատաստան չը պահանջեն,
որովհետև կամենում էր, գոնէ այս գի-
շեր, հանգիստ քնել։ Միայն նա, ինչ-
պէս սովորաբար հաստատ կամք չու-
նեցող մարդիք անում են, չէր կամենում
իսկոյն ցոյց տալ, որ իւր կնոջ խորհր-
դով է վարվում, այլ ընդհակառակը՝
իւր սեպհական հսմոզմամբ։ Նոյնպէս
և երեկ Ճաշի վերայ կոմնուհւոյ պատմած
դիպուածը շատ զարհուրացրեալ էր նո-
րան, թէպէտև այսօր նա չէր կամենում
խոստովանիլ, և նորա մարդու օրուգի-
շերուայ դրութեան վերայ արած նկա-
տմունքները միայն մի լաւ հնարած խօս-
քեր էին, որով նա կամենում էր

իւր հոգւոյ շարժմունքները կոմնուհուց
թագցնել։

Նիզինները իւր յատուկ խօսքը տուաւ
և գնաց տուն։

Այն խորին անպատուութիւնը, որ
այս անարգական վարվողութիւնը նորան
պատճառեցեր, նորա բերանը այնպէս
փակեց, որ ոչ մի տեղ նա ոչ մի բառ
իւրեան Ճշմարտացնելու համար չէր կա-
մենում ասել։ Մինչև անգամ իւր
կնոջը այս անցքի վերայ հաղիւ պատմեց։
Պաստօրի կինը ուղիղ և հաստատ բնու-
թեան տեր էր։ Զիւղումը մեծացած,
նա պայծառ որպիսութիւններով չէր
գերազանցւում, փոքր ինչ անկիրթ էր,
այնու ամենայնիւ, զուարթ գործնական
խելքի և քաջառու գործունէութեան
տեր էր։ Այս վատ համբաւը նա լսեց

դողալով, բայց հաստատապես։ Տան ծախքը, որ այս վերջի ժամանակներում առանց էն-էլ չքաւոր էր, առաւել ևս փոքրացրուց և այնպէս արաւ, որ մնացած փողով կամ պաշարով կարողանան երեք ամիս ևս իւրեանց կեանքը վարել։ Ընդէն վաղուց նոքա ոչ մի կոպէկ եկամուտ չունէին և, եթէ նոցա հին բարեկամները և բարի դրացիները, ինչպէս հին ժամանակներում անում էին, ծածուկ նոցա համար կամ ձու, կամ բանջարիկ, կամ ալիւր և ուրիշ այսպիսի բաներ բերում չը լինէին, նոցա համար այժմ ևս դժուար էր կառավարվել։

Պաստորը իւր խոստմունքը սուրբ էր պահում։ Նա մնում էր իւր Պատմոսում, ինչպէս անուանում էր իւր բնակարանը, և մինչև վերին աստիճանի

ուղիղ լինելից իւր համար բանտ էր շինել։ Նա չէր դնում ոչ մի տեղ, ինչքան որ մծտիկ էլ չը լինէր։ Ոչ ոքի ոչինչ չէր ասում իւր համար կարգուած դատաստանի վերայ։ Նա բոլորովին թողեց մի քանի ծածուկ ըեֆորմնական մնացած ընտանիքներու հետ պարապել և բոլոր օրը անց էր կացնում Ընտուաձաշունչ և ուրիշ Ընտուածաբանական շարադրութիւններ կարդալով։ Այսպէս անցաւ մի քանի շաբաթ։

Մի օր, կոմնի խորհրդատու, Շպրեն-գերը յանկարծ ձիով եկաւ խրճիթը, ուր այժմ Նիզինները բնակւում էր։ Նա այնքան շտապած մնաւ սենեակը, որ երկու ամուսիններին վախեցրուց։

— Այս մտայ ձեզ մծտ, որովհետև Ճանապարհի վրայ էր, միայն ձեզ զգու-

շացնելու և ձեզ օգտաւէտ խորհուրդ տալու համար։ Փրկէք ձեզ, Ն՛ելիներ, իսկ և այսօր այս տեղը թողէք. յետ մի՛ գցէք, թէ չէ վտանգի մէջ էք։

— Ես կոմսին խոստացել եմ այս տեղ մնալ, պատասխանեց պաստօրը. ես պարտ եմ գնալ դատաստան։

— Ն՛էս, դուք ինձ չէք հասկանում, ես ամենևին կոմսի և դատաստանի վերայ չեմ խօսում, ես կարող չեմ պատմել ձեզ այն ամենը, ինչ ես գիտեմ, միայն, ինչպէս ձեր Ճշմարիտ բարեկամ, կ՚ասեմ ձեզ. թողէք շուտով Ռինեռոդը և գնացէք մի ապահով տեղ, զորօրինակ Հադամարայ ամրոցը, իսկ և կոմսի պահպանութեան տակ, այն ժամանակ ես դուք ձեր խոստմունքը կը կատարէք։

— Ն՛էնու ամենայնիւ ես իմ երդ-

մունքս կը քանդեմ։ Ես երդմնել եմ Ռինեռոդումը մնալ։

Պաստօրի կինը, աչքերը արտասուքով լիքը, աղաչում էր խորհրդատուին, որ ինչքան և իցէ, բացատրէ այն վտանգը, որ նոցա ապառնում էր։

— Ո՛ւթէ դուք չը լսեցիք, Ն՛ելիներ, այն քանքաղդ օրը՝ Ռրաունֆելզի հոգևորականներու յափշտակութեան վերայ։ Կայսերական բերդապետը ըստ ֆորմական պաստօրներ է յափշտակում նոցա քնարաններից, իսկ Հոլանդացիք վանքերի խուցերից պրիօրներ, շատ կարելի է դեռ նկուղներից-էլ, բայց այս մի և նոյն է։ Ո՛ւթէ դուք կարծում էք թէ՝ վրեժխնդրութեան համար՝ հարևանացի պապադաւան իշխանները չեն կամենալ իւրեանց ձեռքումը մի քանի ռեֆորմ-

մական պաստօր ունենալ։ Այս դուք, Աղջիկներ, առաջինը կը լինէք, որ նոցա ձեռքը կ'ընկնէք, մննաւանդ, որ ձեր այստեղ նստելը Կեօլնցւոց համար շատ 'ի Ճահ է։ Նոցա համար այնքան հեշտ է ձեզ իւրեանց գերի շինել, որ արժէ միայն ձեռք մեկնել և դուք անմիջապէս նոցա գերին էք։ Որովհետև ես գրեթէ իմ բոլոր գաղտնիքս ձեզ յայտնեցի, ուրեմն, մնացեալը նոյնպէս կ'ասեմ,—(որովհետև այդ ձեր հանգստութիւնը, որով լսում էք այս ամենը, սուրբ մարդոյ-էլ համբերութիւնից կը հանի։ ուրիշը ձեր տեղ արդէն վաղուց փախած կը լիներ այստեղից)։ Ուրեմն իմացէք, որ Կեօլնցւոց ցուցակի մէջ՝ ձեր անունը առաջի համարներումն է գրուած և, եթէ անմիջապէս այստեղից չը հեռանաք,

մէկ երկու օրից՝ դուք Կեօլնցւոց աշտարակի մէջ նստած կը լինէք, և ձեզ թափելու համար երկպատեալ գին կը պահանջեն, ինչպէս Պռուբորնի պաստօրի համար պահանջեցին։ Պոռնեա դուք, պատուելի տիկին, համոզեցէք ձեր ամուսինը։ Թէպէտև այստեղ կենալը ձեզ համար այնքան-էլ վատ չէ—(այս ասելով նա կասկածելի դէմքով չորս կողմի տկլոր պատերի վրայ նայեց)—և այսպիսի ընտանիքով տեղափոխութիւնը պէտք է որ փոքր ինչ դժուար լինի, այնու ամենայնիւ լաւ է աւելի, որ մարդ ցամաք հաց ուտէ և հանգիստ լինի, քան թէ քաղցր կերակուրները վտանգի մէջ։

— Այ, պարոն խորհրդատու, պատասխանեց պաստօրի կինը։ մենք արդէն շատուց է, որ քաղցր կերակուրներ

չենք-եւ տեսել, այլ մի կտոր ցամաք հաց ենք ուտում եւ էն-եւ վտանգի մէջ։ Բայց, եթէ իմ մարդս գլխումը մի բան դնի, այն ժամանակ ոչ ես եւ ոչ դուք չենք կարող այդ բանը նորա գլխից հանել։

— Այս պաստեղ կը մնամ, որովհետեւ թագաւորիս խօսք եմ տուել։ ասաց պաստօրը հաստատ եւ հանդարտ։ — Այնթէ ես իմ տուած խօսքս կատարեմ, էն ժամանակ կոմսը, իւր սեպհական պատիւը պահելու համար, պէտք է ինձի հովանաւոր լինի, որովհետեւ ես նորան տուած խոստմունքս կատարելով եմ վտանգի ենթարկւում։ Այս ամենը, ինչ դուք ինձ պատմեցիք, կոմսին նոյնպէս պատմեցէք եւ նա իւրեան պարտաւոր կը համարի, կամ ինձ Հաղամնրա կանչել իւր հովանաւորու-

թեան տակը, կամ ինձ պահպանողութիւն տալ, ինչպէս իւր իրաւունքներուն տալիս է։ Բայց եթէ կեօնցիք ինձ տանեն-եւ, այնու ամենայնիւ նա ինձ յետ կը պահանջի նոցանից, ինչպէս իւր գերիին, և նորա դաշնակիցները, 'ի հարկ է, չեն մերժիլ նորա պահանջողութիւնը կատարել և ինձ թափելու գին չեն պահանջիլ։

— Ա՜խ, պաստօ՛ր, դուք երևելի բարոյագէտ էք, բայց ոչ քաղաքագէտ, գոչեց խորհրդատուն։ — Ա՛ինթէ մուացել էք, թէ ինչպէս յաճախ-յաճախ դուք կոմսին բարկացրել էք։ Այս շատ ուրախ կը լինի, ինչպէս և իցէ, ձեզանից ազատուիլ։ Բայց, դիցուք թէ, խոստմունք կատարելում՝ նա այնպէս-եւ բարոյագէտ է, ինչպէս և դուք, — այս շատ կա-

րելի բան է. ոչ-ոք չէ կարող հասկանալ այսպիսի անհաստատ մարդուն, —այնուա-մենայնիւ՝ միթէ կարծումէք դուք, որ նա կարողութիւն կ'ունենայ ձեզ փրկելու։ Կեօլնումն-էլ, Տրիրումն-էլ, Վենայումն-էլ նորա ջերմեռանդ պապաղաւան լինելուն դեռ ևս չեն հաւատում։ Բայց եթէ իւր պաշտպանութիւնը ուղարկի պաստօր հերետիկոսին, այն ժամանակ նա իւրեան աւելի կը վնասի, քան թէ եթէ, պատեր Պրակի պատարագը լսելու տեղ, դար ձեր քարոզը լսելու։ Բայց, եթէ դուք Կեօլնի կուրֆիւրստի ձեռքընկնէք, այնժամանակ կոմսը ամենևին չի կարող ձեզի փրկել, այս միև նոյնը կը լինի, եթէ կրակի մէջ իւղ ածէնք։ Դուք, երևի, կարծում էք թէ՝ որովհետև կայսրը կոմսին սիրում է, ուրեմն նա կարող է կուրֆիւրստի հետ վիճել. բայց ա՞խ, ինչքան դուք սխալվում էք։ Կայսերական ողորմութիւնը դէպ'ի նորդարձածը շատ նման է անուշահոտ ածխահոտի։ Դ՝ հարկ է, մեր կոմսը ուրիշ Կասսաու կոմսերի առաջին՝ իւրեան այնպէս է ցոյց տալիս, իբր թէ շատ զօրեղ է։ Դա շատ խելօք մարդ է, բայց ձեզ լաւ յայտնի է, որ ամեն մարդ-էլ, ոք ատամները քչփորում է, միս չէ կերել։ Հաւատացէք ինձ, որ կոմսը կարողութիւն չի ունենալ ձեզ Կեօլնցւոց զինուորների ձեռիցը խլել, եթէ միայն չ'ազատե ձեզ իւր սեպհականն փողերով, այլ այս բանով նա կը զանի բոլոր կաթոլիկական հոգևորականութեան ատելութիւնը։ Բայց ես բոլորը ասացի. լաւ մոածեցէք ամեն

ասածներիս վերայ, միայն, ինչքան կա-
րելի է, շուտով։ Մնա՛ք բարեաւ, ես
շտապում եմ։ Կամ այսօր ես ձեզ Հա-
դամարայում կը տեսնեմ, կամ վաղը
է՝ միւս օրը Կեօլնցւոց աշտարակի մէջ
նստած կը լինէք։

Ինչ կարելի էր նախագուշակել, այն
և պատահեց։ Պաստօրը Բինեբոդում
մնաց և բոլոր օրը իւր բանները կարգի
բերաւ։ Երեկոյեան Կեօլնի կուրֆիւրս-
տի հեծելազօրքից, տասներկու մարդ
եկան։ Պաստօրը հաստատութեամբ այս
յափշտակութիւնը դատապարտումէր,
որովհետև նա իւր խոստմունքը պա-
հելով էր Բինեբոդում մնացել, իբրև
Հադամարայի կոմսի գերի։ Օ՛ին-
վոլներից ամենակոպիտները կամենում
էին նորա վերայ ծաղր անել, բայց չէին

համարձակւում, մինչև այնքան այս մար-
դոյ դէմքը պատիւ էր ազդում։ Բայց,
որովհետև նա կամայ չէր կամենում
նոցա ետևեալ, նոքա էլ շատ չը մնա-
ծեցին. նորա ձեռքերը կապեցին, ձիայ
վերայ նստացրին, զինուորներից մէկը
նստեց նորա հետ և քշեցին Ա՛ստեր-
վալդի միջով՝ դէպ 'ի Կեօլնը։

Ա՛ի՛ւս առաւօտը՝ դեռ չը լուսացած,
պաստօրի կինը տրտմութիւնից յաղթ-
ուած, բայց դեռ չը յուսահատուած,
գնաց Հադամարա ամրոցը։ Ա՛յս նոյն-
պէս, ինչպէս իւր ամուսինը, հաստատ
հաւատումէր, որ կոմսը չի թողնիլ
նորան առանց օգնութեան։ Ա՛յլինները
իսկ և այն օրը նորան արդէն պատմել
էր, թէ ինչ պէտք է նա անի, եթէ,
բան է, նոցա սպառնող վտանգը գայ, և

ինչպէս ամրոցում այս բանի վերայ պատմի։ Ցա հրամայեց մանաւանդ, որ, ինչքան կարող է, նորա Շպրենգերին ասած՝ խօսքերը իսկապէս պատմի և խորհուրդ տուեց, որ նա իսկոյն չը գնայ կոմսի մօտ, այլ առաջ կոմնուհուն տեսնի։

Պաստորի կինը իւր ամուսնոյ ամենամեկ խօսքը, ամեն-մեկ նախազգուշութիւնը լաւ միտը պահեց և ներկայացաւ կոմնուհոյն, թէպէտև ծանր սրտով, բայց հաստատութեամբ, իսկապէս դիտենալով, որ նա մանակից կը դառնայ նոցա հետ այս քանքաղդութիւնում։ Կոմնուհին համեստաբար և ողորմածաբար ողորմելի կնոջը ընդունեց և ասեց նորան. խոստացաւ իսկապէս հաղորդել կոմսին նորա պատմութիւնը և քամքաղդ պաստորի աղատութեան համար ամենայն

բան, ինչ միայն կարելի է, անել։ Դաց՝ի այս, նա նորան հրաւիրեց, որ նա բոլոր տնով դայ Հադամարա ամրոցում բնակվելու, մինչև պաստորի յետ դառնալը, խոստանալով, որ որբացած ընտանիքը կը պաշտպանի և կ՝օգնի։

Մխիթարուած և ոգևորուած պաստորի կինը Մինեռոդ գնաց առաւել քաջացած, քան ամրոցը գալու ժամանակին էր։ Ցա մնադրեց կոմնուհուն հրաւիրումը ընդունել և անմիջապէս իւր բոլոր չքաւոր ունեցած-չ՝ունեցածովը Հադամարայ գալ։

Դսկ կոմնուհին ամենասրտաշարժ խօսքերով իւր ամուսնուն պաստորի յափշտակումը պատմեց։ Դայց այս համբաւը կոմսին ամենևին չը զարմացրեց։

— Դշ աւանակ, քո պաստորդ, գոչեց

կոմը, որով շատ զարմացրեց կոմուս-հուն, որ կարծումէր իւր պատմութիւնով նորա գուլթը կը շարժի։ — Մի այսպէս բառ-առ-բառ խոստմունք կատարելու միտք միայն ըեֆորմական պաստօրի գլուխը կարող է մտնել։ Այս ինքս չէմ, որ երեկ առաւօտեան խորհրդատու Շպրենգերին ձիով նորա մօտ ուղարկեցի, որ նա նորան համոզի Հադամարա ամրոցը գալ։ Այս միթէ չէի իմանում, որ Կեօշնցիք նորան կը տանեն։

— Այս խորհրդատուդ այդ առաջարկութիւնը նորան հաղորդեց քո անունովդ։

— Ո՛չ, ո՛չ. պէտք էր, որ նա մասնաւորապէս և իբրև իւրեանից զգուշացնի նորան. պատեր Պրակը մնաւանդ կամենում էր, որ այս անպատճառ այսպէս

լինի, պատասխանից կոմը։ Դայց «պատեր Պրակ» խօսքը նորա բերանիցը դուրս եկաւ թէ չէ, նա շփոթուեց, կարծես թէ այրեց շրթունքը և յետոյ աւելցրեց. — Դայս նոյնպէս իմ հաստատ կամքս-էլ էր, որ պաստօրի վերայ Ինները՝ անանուն զգուշութիւն գնայ, ինչպէս մի անստորագրած նամակ։ Որով հետև ես չէի կամենում, որ ինձ վերայ սուտ բաներ պատմուէին և սուտ կարծիքներ մեզ դային։

— Դայց, եթէ պաստօրը, խոնարհուելով այս անստորագրած հրամանին, Հադամարա գալ, միթէ չէր կարող պատահել, որ պատեր Պրակը քեզ խորհուրդ տար, որ նորան, իւր տուած խոստմունքը չը պահելու համար, դատաստանի տակ գցես։

*

Կոմսը բարկութիւնից կարմրեց։

— Ուրսուլլա, ես չեմ սպասում քեզանից այսպիսի խօսքեր լսել։ Այս քո դրան պատօրին չեմ դպչում, դուն-էլ իմ իեզուիտներիս մի դպչիլ։

Կոմսուհին վախեցաւ իւր անզգուշութիւնից, շրթունքը խտեց և լռեց։ Այս անգամ պատօրի վերայ՝ էլ չը խօսաց։

Այլ միւս օրը՝ անվաստակ կոմսուհին կարողացաւ շատ հեշտ և, կարծես թէ, պատահմամբ խօսակցութիւնը այս տհաճելի բանի վերայ տանել։ Ա՛յ նոյնպէս, ինչպէս ամեն խելքը կին, մի առանձին շնորհք ունէր խօսակցութիւնը այնպէս տանել, որ ո՛չ-ոք չը կարողանայ նորա վարիչ ազդեցութիւնը նկատել։

Այց կոմսը այժմ պատօրի բանի

վերայ իւր կարծիքներում համոզուած էր։ Երևի, սորանից առաջ՝ իւր իեզուիտից նա խորհուրդ էր առել։

— Այս կողմի մարդիքը, ասաց նա, ամենքեանքը հաստատ հաւատումեն, որ կաթոլիկական քահանաները, բաց 'ի Յիզիսները, ո՛չ-ոք ուրիշը չէ մատնել Հոլլանդացւոց։ Կեօլնումն-էլ այսպէս են մտածում, երևի, առանց պատճառի չէ։ Շատ կարելի է, իսկ և այս պատճառաւ է կուրֆիւրստը հրամայել, որ Յիզիսներին յափշտակեն։ Եթէ նա անմեղ է, ուրեմն Կեօլնումն-էլ կարող է իւրեան արդարացնել և սորանով բանը կը վերջանայ։ Այս յափշտակութիւնը կուրֆիւրստի կողմից մի այլ բան չէ, բաց 'ի մի բարեկամական ծառայութիւն, որով նա կամեցել է այս տհաճե-

լի դատաստանից ինձ ազատել։ Ուրեմն պէտք է թողնել որ այս գործը իւր ճանապարհով գնայ և շնորհակալ լինել Աստուծուց, որ այն, ինչ պէտք էր որ Հադամարայում վճռւէր, այժմ կը վճռւի Կեօշնում։

Այս խօսքերը կոմնուհուն շատ զարմացրին։

— Եթէ դու կուրֆիւրստի հպատակ ես դառել, գոչեց նա։ — Եթէ նա քո իշխողդ է դառել, որ իւր դատաստանն է կանչում այն մարդկանց, ովք պէտք է միայն քո դատաստանովը դատուեն։ Աստուածս վկայ է, որ, եթէ ես քեզ նման գերմանական ինքնակալ իշխան լինէի, չէի համբերել, որ, ոք և իցէ, ինձ հպատակ՝ նաև մի ամենավատ աւազակին, կախաղան հանէ։ Որովհետև

միայն ես ունեմ իրաւունք այս անելու։ Ինչպէս կարողես դու, միայն հմանգաստուութեան համար, քո ամենասուրբ իրաւունքներից ձեռ վեր առնել։ Եթէ ամենայն բանը այդպէս է, ինչպէս ասացիր, ուրեմն քո պատիւդ հրամայում է քեզ անմիջապէս պաստօրին յետ պահանջել։ Կա քո գերիդ էր, նա մնում էր Ինեռոդում, յուսալով քո պաշտպանութեանը, և նա իրաւունք ունէր քո պաշտպանութիւնը պահանջել, որովհետև քո բանտարկեալդ էր։ Կա չէր կամենում քեզ տուած խոստմունքը քակտել, թէ և գիտէր, որ սորանով վտանգի է ենթարկւում։ Կա յոյս կապեց իւր կոմսի և տիրոջ պատւի և կարողութեան վերայ։ Եթէ դու նորան, ընդհակառակը, թողնես կուրֆիւրստի ձեռին, քո պա-

տիւդ երկպատիկ կը կորչի։ Եթէ հպա-
տակը դէպ 'ի իւր տերը մի այսպիսի
խիստ բարեխղճութիւն է ցոյց տալիս,
ուրեմն թագաւորը առաւել պէտք է բա-
րեխղճաբար վարվի նորա հետ։

Կոմսը անհանգստութեամբ յետ ու
առաջ էր քայլում։

— Այս Ինիլները ամէն տեղ, ուր
ես նորան հանդիպումեմ, ինձ նեղու-
թիւն է պատճառում։ Երեկ ես միայն
առաջի անգամ բոլոր կեանքումն՝ այս
մարդոյ քամբաղտութեան վերայ սրտա-
շարժվեցայ, նորան ողորմել էի կամե-
նում, զգուշացնել, այստեղ կանչել։
Շպլենգերը իմ ձիրս գրեթէ մեռ-
ցրուց սաստիկ քշելուց, իսկ այս տխ-
մարը, առաջ բերելով իւր բարոյա-
կանութիւնը, որ կարդացել է, երևի,

Ցվինգլիի շարադրութիւններու մէջ,
պատճառեց իւրեան վատնդ, այլ ինձ
նոր նեղութիւն։

Այց կոմսուհին վսեմութեամբ նո-
րան ասաց։

— Այս տեղ ոչ միայն քո պատիւդ է
ենթարկուում երկբայութեան, այլ և իմն
նոյնպէս։ Այս էի քեզ խորհուրդ տուողը,
որ նորան Ինիերոդ ուղարկես, որով-
հետև նորա բարոյական խստութիւնը
ինձ լաւ յայտնի էր։ Իսկ և այս խստու-
թիւնը մեզ օրինակ պէտք է դառնայ,
որ մենք վարվենք նոյնպէս խստաբար,
ինչպէս նա։ Այս գործում ես մանկակից
էի։ Եթէ դու չ'աշխատես քո պատիւդ
փրկելու, ես կ'աշխատեմ գոնեա իմն
փրկել։ Այս, մինչև իմ վերջի դոհարարս
կ'ծախեմ, որ կարողանամ այն փողերովը

Ելիզներին դերուհինից ազատել։ Ես տուածս վկայէ, որ ես նորան կ'ազատեմ, այս այնպէս և հաստատ և իսկ է, ինչպէս այն, որ ես Հադամարայի կոմնուհին եմ, ինչպէս այն, որ պատիւ պահելում և պարտաւորութիւն կատարելում՝ ես ոչ մի մարդուց պակաս բարոյագէտ չեմ։

— Ինձ մի՛ բարկացնիլ, դոչեց կոմսը, — թէ չէ ամենայն բանը կփչացնես։ Այս քեզ հետ պայմանս կըկապեմ։ Դու ոչ երբէք մի՛ ձեռնարկիլ պաստօրին թափելու։ Այս նաև իմ կնոջս չեմ թողնիլ, որ այսպէս քաղաքական բաներիս մէջ խարնուի։ Դայց ահա՛ քեզ իմ պայմանս. եթէ Ելիզները անմեղ և դու այս կ'ապացուցանես ինձ և իսկ մատնիչը կըգտնես, այն ժամանակ ես կուրֆիւրստից կ'պահանջեմ, որ նա անմիջապէս

նորան ազատէ, թէկուզ հարկաւոր-էլ լինի, որ սորա համար ես ձեռս զէնք վերառնէի։ Ահա՛ քեզ իմ ձեռս։ Լուրեմն, էլ չ'խօսաս պաստօրիդ վերայ։ Այս տխմարը ինձ այնքան նեղութիւն պատճառեց, ինչքան բոլոր իմ հպատակներս միասին ինձ չէին պատճառել։

ԴԼՈԽԽ ԶՈՐՐՈՐԴ։

Աստուծոյ արշալուսը Յլլա գետի մծտ լեռների գագաթները կարմրացրել էր։ Հոմնուհին պատշգամբի վերայ նստած՝ նայումէր կարմրագոյն արշալուսին և կարծումէր թէ փայլուն երկնքի պայծառ գոյներումը, ինչպէս երազում, զանազան հրաշալի երևոյթներ է տեսնում։ Նա անդադար սրբումէր իւր աչքերը և դրեթէ ամչումէր այս նիրհմանը, որովհետև շատ ժամանակ չէր, որ քնից վեր էր կացել։ Այն ժամանակ

այս տեսիլքի զգացմունքը դարձաւ մի խորհրդական գործուած, մի խորին մտածողութիւն այնպիսի բաներու վերայ, որ այս աշխարհքիս չեն պատկանում։ Նա նայումէր արշալուսի փայլման վերայ, որ փոքր առ փոքր աւելի ոսկեգոյն էր դառնում, և կրկնումէր իւր մտքում, Երուսաղէմի արշալուսի և արեգակի ծագման վերայ ասած, ոտանաւորները, որ միտնէր բերում պրոտեստական աստուածաբանական ստեղծաբանների շարադրութիւններից։ Արմնոլ թոյլ, առաւելևս զգացմունքներով շփոթված (որովհետև սպասումը շուտով մայր դարնալ), այս վերջի ժամանակներումն նա այսպիսի ստեղծաբանական մտածողութեանց մէջ առաւել յաճախակի էր ընկնում։

Ա՛յսպիսի խորհրդածութիւններու հետևանքը այն էր, որ այսօր նորա մէջ մի կռիւ բացուեցաւ. նա հարցնումէր իւրեան թէ՝ արդե՞օք Ա՛ստուած այժմ նոյնպէս, ինչպէս հին ժամանակներում, իւր ազդեցութեամբը չէ՞ լուսաւորում այն ջերմեռանդ աղօթարարին, որ նոյնպէս հաստատ և խորին աշխատումէ Ա՛ստուածութեան գաղտնիքը իմանալ, ինչպէս ինքը այս արշալուսի փայլման ժամանակը, երբ նա կարծումէր թէ տեսնումէ Ա՛ստուածային լուսոյ գրուագը։ Ա՛յն րոպէից սկսեալ, երբ նա կռմնի հետ պայման կապեց, այս հարցմունքը նորան հանգստութիւն չէր տալիս։ Ա՛յս անդադար աշխատումէր նորան վշտացնել և այս պատճառաւ միշտ նորան իւր ուրիշ մտքերի հետ միաւորցնումէր։

Արդե՞օք Ա՛ստուած նորան մի ճանապարհ չի՞ ցոյց տալ, որով նա կարողանայ հալածեալի անմեղութիւնը ապացուցանել, երբ մարդկային բոլոր իմաստութիւնը և ջանքը ոչինչ չըկարողացան շինել։ Արդե՞օք չէ կարող պատահել, որ Ա՛ստուած այս բարի գործում նորան, թոյլ կնոջ, գործիք ընտրի։

Այլ, ահա արեգակի լուսափայլ ծայրը ծագեց և փայլեց լեռների ետևից, այլ կռմնուհին դեռևս խորին մտածողութեան մէջ էր ընկղմած։ Լոյսը նոյնպէս ծագեց։ Ճառագայթների ոսկէղէն գետերը լեռներից ձորը ընկան և սփռվեցին։ Ա՛յս նոր լոյսը, կարծես թէ, կռմնուհու հոգին յանկարծ լուսաւորեց։ Նորան յանդգնութիւն թուեց Ա՛ստուա-

ծութեան հետ այսպէս անմիջնորդաբար խօսալու իւրեան արժանի համարելը, և երկնային օգնութիւնը խնդրել այն տեղ, ուր մարդկային քննողութեան դեռ բոլոր եռանդը և սրամտութիւնը գործ չէ ածած։

Ա՛յս ցած էր նայում, շառաչող գետի վերայ, քաղաքի խաղաղ և սիրուն տեսարի վերայ, որոց ծխնելոյզերից դուրս էր գալիս առաւօտուայ առաջի ծուխը, և առաւօտեան մնքուր օդում իսկոյն անհետանում էր։ Այս ամենի աղդեցողութեամբը նորա մտածողութիւնը մի այլ ընթացք ստացաւ. նա սկսեց մտածել այն ամենայն բարեաց վերայ, որով Աստուած վարձատրելը իւրեան և կամին նոցա կառաւարչութեան վերա բերեալ գործունէութեանց համար, այն-

պէս, որ, չ՚նայելով, որ պատերազմի պատճառաւ՝ քանի-քանի տերութիւններ կործանուեցան, այնու ամենայնիւ նորանց յաջողեց մինչև այսօր իւրեանց տերութիւնը պահպանել այսպիսի լաւ դրութիւնում։ Այսպէս կամուրհ մտածողութիւնը կամաց-կամաց ստացաւ իւր սովորական բացայայտութիւնը և կորովմտութիւնը և այն, ինչ նա սորանից առաջ երկնային աղդեցութիւնից չկարողացաւ ստանալ, մի կարճ, բայց պարզ դատողութիւնից յետ, յանկարծ, ինչպէս կայծակ, նորա հոգին լուսաւորեց։ Նորա դէմքը ուրախացաւ և զուարթացաւ։ Այժմ նա գտաւ մի հաստատ կէտ, որից կարողէր կաթոլիկական քահանաներու իսկ մտանիչը գտնելու համար՝ իւր հետաղօտութիւնը հաւաստեաւ սկսել։

Կոմնուհին անհամբերութեամբ սպասումը այն բոպէին, երբ կը կարողանայ իւր քննութիւնը սկսել և հրամայեց խորհրդատու Շպրենգերին իւր մօտ կանչել։

Ծ՝եր հրովարտագէտը, որ առ հասարակ կոմնուհու յարգանքը չէր կարողացել գրաւել, մի այսպիսի յանկարծ և անսպասելի կանչումից շատ զարմացաւ։ Նա իւր երեսի բոլոր թափանցիք գծերը աներևութացրեց, աշխատելով նոցա տեղ ամենահաճելի և բարեհոգի ձևակերպութիւն վերառնել, որ ոչ-ոք չ՝կարողանայ նորա ներքին երկիւղը նկատել։

Կոմնուհին նորան հրաւիրեց նստել, որովհետև կամենումը երկայն և հիմնաւորապես նորա հետ խօսալ։

Նա սկսեց պարզաբար և հիմնաւոր կերպիւ Նիզինների գործերի դրութիւնը նորան պատմել։ Այս ամենը Շպրենգերին շատ լաւ յայտնի էր, բայց այն պարզութիւնը և կարգը, որով այս կնոջ լուսաւոր խելքը բոլոր հանգամանքները միաւորումը և դատում, ծեր հրովարտագէտի կոշտացած հոգւոյ վերայ մի տեսանելի ազդեցութիւն ունեցան։ Այժմ, երբ այս ամեն հանգամանքները, որոց վերայ նա մինչև այժմ քննումը ջոկ-ջոկ վեր առած, միաւորուած՝ նկարուեցան նորա երևակայութեանը, նա Նիզինների բարոյական արժանաւորութեան վերայ այնքան հիացաւ, որ չ՝կարողացաւ իւրեան շփոթութիւնից պահել, կարծես թէ խոստովանումը, որ պաստօրի առաջին պարտէ գլուխ վերբերել։

Բանի բացատրութիւնը աւարտելից յետ, կոմնուհին իւր սուր աչքերը յանկարծ դէպ 'ի խորհրդատուն դարձրեց և ասաց.

— Այ՝ հա՛ բանը ինչպէս էր, բայց ես մի մարդ եմ ճանաչում, որ կաթոլիկական քահանաներու յափշտակութեան վերայ ամէն հանգամանքները աւելի մանրամասնաբար գիտէ, և այս մարդը դուք էք։

Այս բառերս նա այնպիսի մի հաստատութեամբ արտասանեց, և նորա թափանցիք հայեցուածքը այնքան ազդու էին, որ խորհրդատուն, նորա աչքերի զօրութեանը, ինչպէս արեգակի ճառագայթներին, չ'կարողանալով դիմանալ, աչքերը վերթողեց և դողաց։

— Այս մի դիւանական մարդ եմ, ասաց նա։ — Դա՛մ տերս ինձ հաւատում իւր

գաղտնիքները և ես սրբութեամբ նոյա պահումեմ, ես ինքս ոչ մի գաղտնիք չ'ունեմ։ Ճշմարիտ է, ես ամէն տեղ լինումեմ, բայց ամէն մարդ - էլ կոմսի ծառայի հետ զգուշաբար է վարվում և երկիւղ է քաշում նորա հետ անկեղծ լինել։

Կոմնուհին նորա խօսքերը գրեթէ սպառնալի խստութեամբ ընդհատեց.

— Շ՛պրենգերը, մենք այսպիսի ոճով չենք խօսում։ Դուք կաթոլիկացոց քահանաներու յափշտակութեան վերայ ամենայն բանը մանրամասնաբար գիտէք։ Ճա՛շի վերայ, երբ կոմսը սորա առաջի համբաւը ստացաւ, դուք չ'կարողացաք ձեր շփոթութիւնը թագցնել։ Դուք հաղիւ լսումէք, երբ նա այս դիպուածը պատմումէր։ Այս ամենը

դուք արդէն գիտէք, դեռ ևս աւելի, քան այն նամակը յայտնումէր։ Այս երևակայումեմ, ինչպէս դուք ձեր ականջները կը սրէք, եթէ այս ձեզ համար մի նոր համբաւ լիներ... Դուք գիտէք ինչպէս այս բանը պատահեցաւ և ձեր թագաւորին չ'պատմեցիք։ Ինչ էր պատճառը, որ այդ գաղտնիքը նորան չը հաղորդեցիք, երբ դորանով դուք կարող էիք նորա յարգանքը դէպ 'ի ձեզ աւելցնել։ Շպրենգեր, իմ խօսքերս ձեզ տհաճելի կը լինեն, բայց նոքա լաւ եփուածեն, Աստուածս վկայէ, և ես լիալի համոզմամբ կ'ասեմ, որ ձեր լռութեան պատճառը այն էր, որ դուք ինքներդ խառն էք այս բանի մէջ։ Այո-որ դուք ամենայն բանի մէջ մասնակից էք գտնուում. ինչու ուրեմն չէ կարող պա-

տահել, որ այս բանումն նոյնպէս մասնակից լինէք։ Նայէք ինձ վերայ, նայէք ուղիղ, իմ աչքերիս։ Հա՛, տեսնումէք, դուք այդպիսի մի խորամանկ հրովարտակ դէտ էք և այս չէք կարող կատարել։ Այս երաշխաւոր եմ կենում և խօսք եմ տալիս ձեզի, որ ոչինչ չար բան չի պատահիլ ձեզ հետ. ուրեմն, ասէք, Շպրենգեր, ամենայն բանը ճշմարտութեամբ ասէք, որ անմեղը հալածանքից ազատուի, որ իմ հոգուս մէջ-էլ, ձեր հոգու մէջ-էլ խաղաղութիւն ընկնի։

Խորհրդատուն գրեթէ ամենևին առանց շփոթութեան, հաստատաբար պատասխանեց.

— Այս ոչինչ աւելի չ'ունեմ ձեզ ասելու։ Հրամայէք, եթէ կամիք, ինձ չարչարանքներու տալ, ես սորանից աւելի,

ինչ ձեզանից իսկոյն լսեցի, մի բառ-էլ չեմ արտասանիլ։

— Դուք արդէն ակամայ ամենայն բանը խոստովանեցիք, և այս առաջի անդամը չէ, որ պատահումէ ձեզ հետ, գուշեց Կոմնուհին, և այս հիւանդ կնոջ թոյլ ձայնը, ինչպէս մի ահեղ դատաւորի ձայն, ահալի էր։ — Այնթէ դուք իսկև այն ժամանակը, երբ Ճաշի վերայ ձեր անմոռդրութիւնից զարթնացած՝ պատմեցիք Հոլդհաուզէն իեզուիտի յափշտակվելը, որի վերայ ոչ-ոք ոչինչ չըգիտեր և ոչ-ոք ոչինչ չէր հարցնում, ցոյց չ'տուիք բաւական պարզապէս, որ ձեզ ամենայն բանը յայտնիէ։ Դուք այն ժամնակ ձեզ համար պատրաստած սատանայի որոգայթը ընկաք և, չ'նայելով ձեր խորամանկութեանը, դուք հաղորդեցիք մեզի այնպիսի մի գաղտնիք, որի վերայ, ձեր ասելովը, ոչ մի տանջանք չէ կարող այժմ ձեզանից մի խօսք հանել։

Շպրենդերը հանդիստ պատասխանեց.

— Իմ թագաւորս կարողէ պահանջել ինձանից իմ գլուխս և ես, առանց ընդդիմանալու և տրտնջալու, նորա վճռին կ'խոնարհուիմ, բայց ոչ մի տանջանք չէ կարող երբէք ինձ հարկադրել, որ ես դոնեա մի բառ ասեմ աւելի, քան արդէն ասել եմ ձեզ։

Կոմնուհին լռեց. Նա զգումէր, որ այս Ճանապարհով բանը առաջ տանել չէ կարող, և խօսակցութեան ոճը փոխեց, թէև շատ ակամայ, որովհետև այս ըստ էութեան այս ոճն էր նորահոգւոյ դրութեան հետ յարմար։

— Դուք Սիզիների հետ շատ ժամանակուայ բարեկամ էք, հարցրեց նա քաղցրութեամբ և հանդստութեամբ։

— Ուսումնարանումը մենք դասակիցներ էինք և բոլոր մեր կեանքումը միմիանց հետ չենք բաժանուած։

— Մինթե դուք բարեկամութեան պարտաւորութիւն չէք համարում այս բանում ինձ հետ միախորհուրդ լինել, որ ես կարողանամ ձեր բարեկամի զօրեղ թշնամիներուն յաղթել։

— Ա՛յ, կոմսուհի, ես ամենայն բանը, ինչ իմ բարեկամութեան պարտաւորութիւնը պահանջումէր ինձանից, արդէն կատարել եմ նորա համար, ես նորան նախազգուշացրի, բայց եթէ այս մտածական բարոյագէտը միայն կամակորութեամբ կամայ որոգայթ մտաւ,

այնու ամենայնիւ ես ինձ պարտաւոր չեմ համարում միայն բարեկամութեան պատճառաւ նորա ետևից այնտեղ մտնել։

Այս խօսքերից կոմսուհին մինչև այնքան զարհուրեց, որ նորա անդամները սաւեցին։ Մի քանի րոպէ անցաւ և նա չ'կարողացաւ խօսալ։ Վերջապէս ինքը իրան զօրելով հարցրեց նորան.

— Կարծեմ դուք պրոտեստանտ էք։

— Այս մի այնպիսի հարցմունք է, կոմսուհի, որին շատ դժուար է պատասխանել։ Դաց 'ի ձեզ, ես ոչ ոքի մի պարզ և ճշմարիտ պատասխան չէի տալ։ Այժմ մի զարմանալի ժամանակ է, կոմսուհի. երկու դաւանութիւնն-էլ այս երկրումն դեռ ևս խառնած են։ Ո՞նայելով ձեր ամուսնոյ եռանդին դէպ 'ի պապադաւանութիւնը, այստեղ դեռ ևս

մի երկպառակութիւն կայ։ Նոյնպէս և
ես, մինչև ունեմ կարողութիւն, այս
երկպառակութիւնից յետ չեմ մնում։
Դաց 'ի սորա, իմ կրօնս նոյնպէս, ինչ-
պէս առհասարակ Հադամարայ կոմնու-
թեան կրօնը, դեռ բոլորովին չէ պար-
զացել։ Այնթէ ինձանից պապադաւանու-
թեան հոտ չ'գար, պատուելի պատեր-
ները արդէն վաղուց ինձ կոմնի առանձ-
նարանից քշած կը լինէին։ Դայց ձեզ
պարզ և հաւատալի պատասխան տալու
համար՝ կ'ասեմ—միայն ձեզ—, որ իսկը
ես ըեֆորմական դաւանութեան եմ։
Այս դեռ պապադաւանական պատարա-
գում ոչ մի անգամ չեմ եղել, և
կարծեմ, որ ոչ մի ժամանակ-էլ չեմ
լինելու, որովհետև իմ դիտաւորու-
թիւնս առ ժամանակ այն է, որ մնամ ըե-

ֆորմական դաւանութեան մէջ։ Մենք
նոյնպէս ունենք համոզմունքներ և մի
առանձին յարգանք դէպ 'ի ժառանգա-
կան կրօնը, ինչպէս դէպ 'ի հին սեղանը,
կամ աթոռը, որ մեր պապերը մեզի
թողնումեն։ Դ.մն առարկան, որին վա-
ղուց սովորես, միշտ առաւել յարմար և
լաւ է թւում, մանաւանդ ծեր մարդ-
կանց։

Կոմնուհին, թէև գիտէր, որ նա պրո-
տեստանտ է, այնու ամենայնիւ հարց-
րեց նորա դաւանութեան վերայ, կամե-
նալով համոզել նորան, որ նա, եթէ
բարեկամութեան պատճառաւ չէր կա-
մենում, գոնեա իւր հալածեալ կրօնի
համար՝ իւր հաւատակցին փրկի։ Դայց
այս զարհուրելի խօսքերը նորանից լսե-
լով, նա դողալով յետ քաշվեց։ Դ.յս

պէս կրօնի վերայ խօսալը, նորան մի հայհոյանք թուեց, և այսպիսի մի հայհոյանք դէպ 'ի Աստուածը, նորա խիստ կանոնները՝ մի մեծ մեղք էր, ինչպէս աւազակութիւն և մարդասպանութիւն, և նա ամենևին չ'գիտէր, թէ ինչ բանի վերայ առաւել զարմանայ։— այս անհաւատութեան, թէ այս ծաղրական ոճի վերայ, որով խորհրդատուն իւր համոզմունքները յայտնեց։ Բայց այս ոճը նորա համար սովորական էր դարձել։ Ակզբումը նա կոմսի սէրը գտաւ ամենայն բանի վերայ թէթև ծաղրաբանելով, որով նորան զուարճացնում էր։ Այս վերջի ժամանակներումն նա առաւել անելկիւղ և համարձակաբար էր խօսում, մանաւանդ այն ժամանակ, երբ մի սրամիտ կամ ծիծաղալի բան էր

գտնում։ Բայց երբ խօսակցութիւնը կրօնի վերայ էր գնում, այն ժամանակ նա լեզուն կարճ էր պահում, կամ ամենևին չէր խօսում, որովհետև այսպիսի խօսակցութիւնում՝ կոմսը ծաղրաբանութիւն ամենևին չէր սիրում, մանաւանդ իւր պապադաւան դարնալուց յետ։ Այս պատճառաւ խորհրդատուն շատ վախեցաւ, երբ նկատեց, որ իւր խօսքերը շատ վատ ազդեցութիւն թողին կոմսուհուն վերայ, որովհետև նա լաւ գիտէր, որ կոմսուհին այսպիսի բաներում առաւել խիստ է, քան թէ կոմսը ինքը։ Բայց բառերը բերանից արդէն դուրս էին եկել և նոցա յետ բերելը անկարելի էր։ Խորհրդատուն բաւականի շուտով, ինչպէս կարողացաւ, հանդստացաւ, բայց կոմսուհին ընդհա-

կաւակը՝ եվ չկարողացաւ խօսակցութիւնը շարունակել, բայց մի տաք ցանկութիւն էր զգում այս անհոգի մարդուն մի հոգւոյ բառ ևս ասել։

— Դուք ոչ Ճշմարտութեան և ոչ ուղղութեան համար չը կամեցաք ինձ մի բան ասել. դուք մերժեցիք ձեր բարեկամին օգնութիւն հասցնել ձեր բարեկամութեան համար, և եթե ձեզանից պահանջէին, որ դուք ձեր հաւատակցին օգնէք ձեր դաւանութեան համար, — այս սրբութեան աղտեղութիւն և նորա վերայ կատակութիւն կըլինէր։ Այց իմ խօսքերս չը մոռանաք և ժամանակով դուք կ'տեսնէք, որ նոքա Ճշմարիտ են։ — Դուք ձեր կամակորութեան մէջ շատ ժամանակ-եվ չէք մնալ. խղճմտանքը աչքի նման մի բան է. նորա մէջ ընկած՝

ամենափոքրիկ շիւղը, ինչպէս մի տանջելի վերք, ցաւեցնում նորան, և մինք, մինչև այս փոքրիկ շիւղը նորա միջից չենք հանում, երբէք հանգստութիւն չենք կարողանում գտնել։ Շպրենգէրը, դուք շուտով խղճմտանքի այս անտանելի ցաւը ձեզ վերայ կը փորձէք, այո՛, կարելի՞ է այժմ ևս դուք նորան զգում էք, եթե չէ, ուրեմն, ինչպէս ասացի, շուտով կը զգաք, և երբ դուք նորան կը զգաք, այն ժամանակ եկէք ինձ մօտ։ Այն և մինք այժմ այսպիսի անբաւականութեամբ ենք իրարից մեկնում, այնուամենայնիւ՝ այն ժամանակ ես ձեզ սիրով և ուրախութեամբ կ'ընդունեմ։

Խորհրդատուի շրթունքները դողդողում էին, որ նեղքին շփոթութեան նշան է։

— Լռմնուհի՛, ես 'ի ծննդենէ չեմ

տեսել և չեմ ճանաչել ձեզ նման կնոջ, գոչեց նա, կարծես բոլորովին փոխվելով և ուրիշ մարդ դարձնալով։ — Այսօր ես աւելի ոչինչ չեմ կարող ձեզ ասել, ինչքան-էլ իմ խղճանքիս չըխփէք, բայց ամեն բանը դուք կ'իմանաք, երբ ժամանակը կը գայ — օրերումն։ Այս, ինչքան կարողացայ, ինձ հաստատ էի պահում, բայց դուք ամենահաստատ և չոր հոգին-էլ կարողէք փափկացնել, ինչպէս դաբբինը — կարմրացրած երկաթը։

— Այ, աղը մենք կը տեսնուենք, ասաց կոմնուհին։

Խորհրդատուն լուութեամբ ողջունեց և սենեակից դուրս գնաց։

Մի ուս առաւօտը լուսացաւ։ Կոմնուհին անհամբերութեամբ խորհրդատուին սպասումը, բայց նա չէր երևում։ Այս մարդ ուղարկեց, որ նորան կանչեն, բայց ոչ մի տեղ նորան չը գտան։ Կոմնը սեղանի վերայ, առանց իւր սիրելին, տխուր էր։ Ամենքեանքը երկմիտ էին։ Հրամայեց, որ նորան որոնեն, բայց ամեն աշխատանքները 'ի զուր մնացին։ Մի քանի օր անց կացին և խորհրդատուն ամենևին անհետացաւ։ Այրա սենեակումը՝ ամեն բանը իւր սովորական կարգումը գտան։ Յայտնի էր միայն այն, որ առաւօտեան լուսաբացին՝ նա ձիով դուրս էր եկել և քշել էր դէպ 'ի կոմնութեան արևմտեան սահմանի անտառը։ Այն ժամանակից նորան ոչ ոք չէր տեսել։ Հատ վատ

լուրեր էին մեզ գալիս. ասումէին թէ՝ նորա հետ քամբաղդութիւն է պատահել, նորան սպանել են։ Բայց ամենահաւատալին այն էր, որ, ինչպէս ասումէին, Հոլլանդացւոց զօրքերը նորան նոյնպէս, ինչպէս պապադաւան քահանաներուն, տարեալեն։

Մանաւանդ այս վերջի լուրը կոմնուհուն շատ վախեցրեց։ Կորածի վերայ նա այնպիսի մի անհանգստութեամբ և անհամբերութեամբ էր սպասումՀամբաւի, որ կարծես թէ այս կորածը նորա հաճելի որդին էր։ Մի այն Շպրեն-գերն էր կարող Կիզիսերի գործի վերայ նոր լոյս թափել։ Կա ինքը արդէն խոստովանեց, որ այն խօսակցութիւնից նորա սիրտը շարժուել էր, և յանկարծ նա, առանց մի համբաւի,

կորաւ, իսկ նորա հետ միասին կորաւ և կոմնուհու յոյսը, որ ժամանակաւ իրաւունք կ՚ունենայ կոմսից պահանջել, որ նա Կիզիսերին կուրֆիւրստից յետ պահանջի։

Հինգ օր այսպէս տաժանելի սպասողութեան մէջ անցան և կոմնուհին խորին տխրութեան և յուսահատութեան մէջ էր ընկել։ Մի այն կրօնն էր, որ նորան մխիթարում և զօրացնում էր։

Բայց յանկարծ Գահենբուրգից մի ձիաւոր եկաւ և կոմնուհի Ուրսուլա-Կասասու-Հաղամնրային մի նամակ բերաւ։ Կորա պարունակութիւնը այս էր.

«Ընցեալ չորեքշաբթի օրը, երբ Ձեր Լուսափայլութիւնը, ինձանից

այնպէս խստաբար պահանջեցիք, ես խոստացայ Կիզիներին բանը բացատրել։ Ը.հա, խոստմունքս կատարումեմ։ Պատօրը ամենևին անմեղ է. նա անց էր կացնում ժամանակը միայն իւր գրքերի հետ և ոչինչ չը գիտեր ոչ կաթոլիկական քահանաներու ծածուկ տեղերու վերայ և ոչ նոցա շորերը փոխելու վերայ, ինչպէս և առհասարակ այս աշխարհքիս ամենայն բաներու վերայ գրեթէ ոչինչ չէր իմանում։ Քահանաներու անվտանգութեան համար գործած՝ խորամանկութիւններու վերայ, միայն ես էի մանրամասնաբար ամենայն բանը իմանում, որովհետև ես էի նոցա հնարողը, և բաց 'ի կոմսը, այս բաները ոչ-ոք չը գիտեր։ Թէ և մի քանի մծտիկ անձինք գիտեին, թէ որ-տեղ են թագ-

ցրած կաթոլիկական քարոզիչներից մի քանիքը, այնու ամենայնիւ ոչ-ոք չը գիտեր ամեն պարագաները, այլ միայն ես էի իմանում։ Ուրեմն ուրիշ ոչ-ոք չէ, այլ միայն ես եմ նոցա Հոլլանդացոց մնասողը։

«Ը.այս տարափոխիկ պապագաւանութիւնը, որ, ինչպէս հին ժամանակներում՝ ժանտախտը, ջերմը և այլ ցաւերը, բոլոր կոմսութիւնում տարածուեց, ինձ շատ զզուացրուց, մնասանդ, որ ես, պրոտեստանտ լինելով, պարտէի այս կաթոլիկական դիմակախաղում նոյնպէս մնասակից գտնուիլ։ Իմ տհաճութեանս վրէժխնդրութեան համար, ես կաթոլիկական երիցապետներու տեղը Հոլլանդացոց ցոյց տուի, որ մենք, պրոտեստանտներս, նոյնպէս կարողանանք զուարճու-

թիւն գտնել այսպիսի որսում։ Այս բանը, փառք Աստուծոյ, ինձ շատ լաւ յաջողեց։ Այս ամեն ասածներս շատ ճշմարիտ են, ես պատրաստ եմ երդմամբ հաստատել նոցա։

«Ձեր Լուսափայլութեան, նոյնպէս և կոմսին, Ձեր ամուսնուն, մատուցանումեմ իմ խորին շնորհակալութիւնս և երախտագիտութիւնս այն մեծ ողորմութիւնների և բարեաց համար, որ Դուք Ձեր դրանը ինձ ցուցանումէիք։ Ինչքան իմ կարողութիւնումն եղել է, ես եռանդով իմ ծառայութիւնս կատարել եմ և իմ թագաւորիս միշտ հաւատարիմ եմ եղել, թէպէտև երբեմն, կոմսի զուարճութեան համար, ծաղրածու պատկերացնելով, իմ ծաղրաբանութիւնս նորա առաջից-էլ գոլծ էի

ածում։ Այս Հադամարայում դեռ երկար ժամանակ կը մնայի, բայց Դուք անխղճաբար առաջիս այսպիսի մի հայելի դրիք, իմ խղճմտանքս այնքան շարժեցիք, որ դողի մէջ ընկայ և ամենքաշեցի շարունակել Ձեր դրանը երկուերես մարդոյ մասն խաղալ։ Միայն Դուք կարողացաք մինչև այստեղ հասնել, որ ինձանից իմացաք իեզուիտներու հետ արած իմ բանս։ Եթէ մի այսպիսի պաստօր լինէր, որ կարողանար իւր երկայն քարոզովը մարդոյ հոգի շարժել այսպէս, ինչպէս Դուք Ձեր մի քանի խօսքերովը, այն ժամանակ ես ամեն կիւրակէ առաւօտ ժամ կ'երթայի։

«Այսպիսի խոստովանութիւնից յետ ինձ Հադամարայում մնալ արդէն անկարելի էր։ Այս այն գիշեր սորա վերայ

մնածեցի, բայց Ձեր խօսքերը ամենից զօրեղ էին խփում իմ ականջներիս, և ես որոշեցի միւս առաւօտը Հադամարայից դուրս գալ։ Այժմ ես ապահով տեղ եմ։ Պրօտեստանտ թագաւորներից շատերը ինձ աւաջարկումն իւրեանց մօտ ծառայել։

«Շնորհակալ եմ կրկին Ձեր ինձ ցուցած ամեն ողորմութիւններու և բարեաց համար։ Աստուած Ձեզի վարձատրի, Ձեր խրատներու համար, որ ինձ տուել էք, և թող բոլոր Նասսաու-Հադամարայի կոմնական տան վերայ ուղարկի Իւր օրհնութիւնը։

«Ձերում Լուսափայլութեան

«ամենախոնարհ ծառայ

«Մ. Վրէսպոտոր Շպէնգլեր։»

Ուրիշ հետազօտութիւններ Շպրենգերի ասածներու ճշմարտութիւնը հաստատեցին։ Կոմնը, մեծահոգութեան, կամ քաղաքավարութեան պատճառաւ, ոչ միայն չ'որոնեց մի այնպիսի պատահմունք, ուր կարող էր իւր աւաջուայ խորհրդատուից վրեժխնդրութիւն հանել, այլ և իւր սեպհական ծախքով բոլոր նորա ունեցած-չ'ունեցածը Դահենբուրգ ուղարկեց, այն պատճառաւ— ինչպէս նա ինքը ասումէր—, որ նորանից ոչ մի յիշատակ չ'մնայ Հադամարայում։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

Շպրենգերի նամակը ստանալուց՝ երկու շաբաթ յետ, Կիզինները Կեօլնցոց քանտից ազատուեց։ Կոմն Յովհան-Լուդուիկը իւր խօստմունքը կատարեց։ Կուրֆիւրստը առաջ ամենևին լսել չէր կամենում կոմնի պահանջողութիւնը, կարծես թէ պաստօրի տեղ մի երևելի պրոտեստականթագաւոր պէտք է նորա ձիւցը դուրս գար, բայց կոմնը այնպէս համարձակ և տաք պահանջումէր, որ նա զարմանալով և բարկութեամբ լիացած վերջապէս պաստօրին

յետ դարձրեց։ Կոմնը, որովհետև Հաղամնրայում արդէն կաթոլիկական դպրատուն (Jesuitencollegium) էր շինել և սորանով ապացուցել էր իւր ուսանդը դէպ 'ի պապադաւանութիւնը, կարող էր աւելի արձակ և համարձակ ներգործել և մէկ պրոտեստանտեան պաստօրի պատճառաւ՝ կուրֆիւրստին իւր զօրութիւնը ցոյց տալ։

Կիզինները շտապեց ոտով, առանց ուրիշի պաշտպանութեան, յոյսը դնելով միայն Աստուծոյ օգնութեան վերայ, յետ դառնալ տուն։ Այն ժամանակներում մեծ համարձակութիւն էր այսպէս մենակ ճանապարհորդութիւն անելը, բայց պաստօրը չէր կամենում շաբաթներով յաջողակ պատահմունքի սպասել։ Այլ նա իւր հոգևորականի

շորերը փոխեց և հագաւ Լէոնի քա-
ղաքաբնակէի շոր, թէ-չէ նա մէկ մեղն-
էլ չէր կարող անցնել։ Այնթէ անտառ-
ներում մոռնացած ժամանակը, փոքր
ինչ վախենումէր, այն ժամանակ նա իւր
մտքումը կրկնումէր Սաղմոսի այս խօս-
քերը. «Լեր իմ, Աստուած, ապաւէն
և տեղի ամուր կեցուցանել զիս. զի
հաստատութիւն իմ և ապաւէն իմ Դու
ես» (Սաղմ. ՀԺ. 4.), և սորանով քաջա-
ցած՝ անվախ շարունակումէր իւր ճա-
նապարհը։

Այսպէս երեք օրից յետ՝ երեկոյեան
նա եկաւ, Հաղամնրա հասաւ։ Թոզո-
տած, ամենեցունց անկատելի և իւր
ազգականներից ոչ-ոքի չը տեսած, նա
շտապումէր ուղիղ ամրոցը գնալ, իւր
շնորհակալութիւնը և Աստուծոյ օրհ-

նութիւնը կոմնուհուն տանելոյ համար,
որովհետև գիտէր, որ նա էր միակ իւր
պաշտպանը և ազատիչը։

Սանդխտով բարձրանալիս՝ նա տե-
սաւ կոմնուհու սենեակի դուռն մօտ
կանգնած նիզակաւոր, որ հագուած էր
բոլորովին սգատեսակ։ Այս մահուայ
նշանը տեսնելով, նա շատ զարմացաւ և
բոլոր անդամներով դողաց, կարծես թէ՝
նախազգացմամբ նա արդէն իմացաւ՝
թէ ով է մեռնողը։ Նիզակաւորը,
տեսնելով թոզոտած օտարականը, նոյն-
պէս շատ զարմացաւ։ Նիզինները,
իւր շփոթութիւնը հազիւ թագցնելով,
մօտեցաւ նորան և ասաց, որ ցանկանումէ
կոմնուհուն տեսնել։ Այց, երբ նիզա-
կաւորը, նորան պատասխանելու տեղ,
շարունակումէր զարմացած՝ նորա վերայ

նայել, այն ժամանակ Կիզիները, ձայնը բարձրացնելով, ասաց, որ նա Լինեռոդի պաստօր, Կիզիներն է, և՝ ի հարկէ կոմուհին չի մերժիլ նորան ընդունել։

Այս բոպէիս դուռը բացուեց և կոմն Յովհան-Լուդուիկը ինքը դուրս եկաւ։ Կոմնը, որ այնքան հպարտ էր, առաջինը պաստօրին լուռութեամբ և բարեկամաբար ողջունեց և նորա ձեռքը բռնելով, նորան կոմնուհու սենեակը տարաւ։ Դահլիճը մութն էր և չորս կողմից սեաւ ՀՈԹով պատած։ Չորս կողմով վառ մումեր էին շարած, գետինը ծաղիկներով պատած էր, և նոցանից մի ծանր հոտ էր փչում։ Սենեակի կենդրոնում մի դագաղ էր բարձրանում; դագաղի չորս կողմով շարքով՝ չոքած էին կոմնուհու դրան ծառաները, և

նորա դրան պաստօրը կոմնի իեզուիտներու հետ միասին աղօթք էին կարդում։

Դագաղի միջին դրած էր կոմնուհի Ուրսուլայի արդէն անշունչ մարմինը... Նորա երեսի գեղեցիկ և աղնիւ գծերը այժմ աւելի հանգիստ և հաշտելի էին թւում, քան նորա կենդանի ժամանակը։

Կիզիները այս տեսնելից՝ սկսեց հեծ-հեծել։ Կոմնը նորա հետ միասին լալիս էր և բարեկամաբար թեք էր ընկած նորա ուսին, որին մինչև այժմ նա իւր մահաբեր թշնամին էր համարում, և այնպես մի սիրով էր թեք ընկած, որ կարծես թէ այս երկու մարդը բոլոր իւրեանց կեանքում սրտակից բարեկամք են եղել։

Երբ նոքա երկուքն-էլ փոքր ինչ

հանգստացան, Ներսիսը դադարի առաջին չոքեց, և երկայն ժամանակ աղօթք էր անում, յետոյ բարձր ձայնով ասաց. «Այրանի ննջեցեալոց 'ի տապանս, զի նոքա հանգչին 'ի վաստակաց իւրոց, և գործք նոցա զհետ նոցա երթան։» Այլ իեզուիտները միասին ասացին. «ամէն։»

Ներսիսը վեր կացաւ, կոմսին գլուխ տուեց և լռութեամբ հեռացաւ։

Կոմսուհու մահի պատճառը՝ ժամանակից առաջ մանկածնութիւններ։ Սա հից փոքր ինչ առաջ՝ նա Ներսիսին տուած իւր խոստմունքը կատարեց և Լիպպէի կոմսութիւնում, իւր հօր մօտ, նորան պաստօրի տեղ տուեց, և այս աղնիւ մարդը, որ միւս այժմ բոլոր իւր կեանքում միայն քամբաղդութիւն

էր տեսել, վերջապէս կոմսուհու շնորհիւը կարողացաւ մնացած իւր կեանքի համար հանգստութիւն գտնել։

Երբ կոմսուհու դրութիւնը վատացաւ, նա խնդրեց, որ իւր խոստովանահայր պաստօրը ուղարկեն, բայց խնդրած պաստօրի տեղ, նորա մօտ երեք իեզուիտ ուղարկեցին։ Այս իեզուիտները մահաբեր չարչարանքներու մնջի (անկողին) մօտ՝ բոլոր իւրեանց ճարտարութիւնը, տրամաբանութեան մէջ ունեցած՝ բոլոր իւրեանց հնարքը գործածեցին, որ գոնեա այս վերջի րոպեներում կարողանան այս հոգին կաթոլիկական շինել։ Այլ հոգւով մեծ կոմսուհին, իւր մարմնական տանջանքներու հետ միասին, այս հոգւոյ տանջանքներուն-էլ կարողացաւ դիմել։ Այն

ժամանակ, երբ իեզուիտները կարդու-
մէին իւրեանց համոզիչ ճառերը, կոմ-
սուհին կամաց, գրեթէ իւր մտքում,
ըեֆորմական աղօթքներ էր կարդում։
Նորածինը, չը նայելով, որ աղջիկ էր
և մի ժամ-էլ կենդան չը մնաց, իեզու-
իտներու աշխատանքով (որ գոնեա այս
հոգին փրկուի), անմիջապէս կաթոլի-
կական ծիսով մկրտուեց։ Լոկ մայրը
հոգին աւանդեց իւր այս դիւիզին հաւա-
տարիմ.

«Յէ հաւատի հաստատուն։»

«In Glauben fest.»

ԱՄԵՐՅ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0348730